ՆՈՐ ՋՈՒՂԱ

ՏԵՂԵԿԱՏՈՒ ՍՊԱՀԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԺԵ ՏԱՐԻ ԹԻՒ 118 ՅՈՒՆԻՒԱՐ-ՓԵՏՐՒԱՐ 2017

ՍՊԱՀԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ 16-ՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՊԱՏԳԱՄԱՒՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

«ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆԻ ՏԱՐԻ»

(2017)

ՊԱՏԳԱՄ

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան
թեմական առաջնորդներուն,
հոգեւոր դասուն,
ազգային իշխանութեանց,
եւ մեր ժողովուրդի զաւակներուն

Նոր տարուան սեմին, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Անթիլիասի Մայրավանքէն հայրապետական օրհնութեամբ, քրիստոնէական ջերմ սիրով եւ ազգային վառ ապրումներով կ՝ողջունենք մեր ժողովուրդի սիրելի զաւակները: Կ՝աղօթենք առ Բարձրեալն Աստուած, որ մեր ազգի բոլոր զաւակներուն, մեր ընտանիքներուն, մեր միութիւններուն ու կազմակերպութիւններուն եւ մեր եկեղեցւոյ ու հայրենիքին կեանքը լեցնէ ու պայծառացնէ Իր երկնային առատ բարիքներով:

Ինչպէս գիտէք, անցնող տարիներու ընթացքին իւրաքանչիւր տարուան սեմին մեր ժողովուրդի զաւակները հրաւիրեցինք իրենց մտածումներուն, աշխատանքներուն ու կեանքին մէջ լուսարձակի տակ բերելու մեր ազգին ու եկեղեցւոյ առնչուած հիմնական արժէք մը, խոր մտահոգութիւն մը կամ լուրջ սպասում մը: Մեր փորձառութիւնը ու մանաւանդ մեր ժողովուրդին դրական ընդառաջումը անհատական, թեմական թէ գաղութային մակարդակներու վրայ, ցոյց տուաւ թէ նման նախաձեռնութիւն մը կենսական է՝ մեր կեանքը հեռու պահելու կաղապարուած մտածողութիւններէ, հնամաշ գործելակերպերէ եւ յոռի կենցաղակերպերէ, եւ մեր զաւակները հրաւիրելու՝ մէկ կողմէ ամբողջէն կառչած մնալու մեր կրօնական, ազգային ու բարոյական արժէքներուն, աւանդութիւններուն ու ձգտումներուն, եւ միւս կողմէ՝ բացուելու, միշտ քննական ոգիով ու զգուշաւոր մօտեցումով, մեզ շրջապատող իրականութիւններուն ու մարտահրաւէրներուն: Թեմերուն տուած մեր այցելութիւնները եւ ընդհանրապէս մեր կառոյցներուն ու ժողովուրդին հետ մեր ունեցած շփումները եւս ցոյց տուին այս նախաձեռնութեան կարեւոր տեղն ու դերը ներկայ համաշխարհայնացած աշխարհին մէջ, ուր մեր ժողովուրդը միշտ ենթակայ է թէ՛ իր ինքնութիւնը կազմող արժէքներէն հեռացման վտանգին եւ թէ զինք մեկուսացման մղող ազդակներու ազդեցութեան: Հետզհետէ բազմացող ու տարածուող երեւոյթներ ու մտահոգութիւններ, որոնք վնասաբեր են մեր ազգին առողջ ու հզօր պահպանման:

2016 տարին հռչակած էինք «Ծառայութեան Տարի»: Անցեալ տարուան ընթացքին զանազան ծրագիրներու ու ձեռնարկներու ճամբով շեշտեցինք եկեղեցւոյ ու ազգի կեանքին մէջ ծառայութեան առանցքային կարեւորութիւնը՝ յիշեցնելով, թէ Աստուծոյ Որդին Ինքզինք որպէս ծառայ նկատեց եւ որպէս ծառայ Իր երկրաւոր առաքելութիւնը իրագործեց. հետեւաբար, Ան մեզի համար պէտք է դառնայ գերագոյն տիպար ճշմարիտ ծառայութեան: Վստահ ենք, որ այս առիթով կատարուած բոլոր նախաձեռնութիւնները մնայուն հետք մը պիտի ձգեն մեր կեանքէն ներս, մեր ժողովուրդի զաւակները հրաւիրելով առաւել յանձնառութեամբ ծառայելու մեր եկեղեցւոյ, հայրենիքին ու ազգին եւ զօրակից դառնալու մեր կառոյցներուն, որոնք կոչուած են մեր հոգեւոր, ազգային ու մշակութային արժէքներու եւ իտէալներու կենսագործման ու հարստացման:

Արդարեւ, կեանքը, բանական թէ անբան, ինքնագոյ չէ, այլ Աստուծոյ ստեղծագործութիւնն է: Աստուած ստեղծեց տիեզերքը, ինչպէս նաեւ՝ մարդը, որպէս պահակը ու խնամակալը ստեղծագործութեան: Կեանքը իր բոլոր տարրերով ու տարածքներով կարիքը ունի մնայուն վերանորոգման, այլապէս պիտի կորսնցնէ իր ներքին կենսու-

նակութիւնը, իմաստն ու նպատակը, ինչպէս կը շեշտեն Աստուածաշունչը եւ աշխարհի բոլոր կրօններու ուսուցումները: Վերանորոգումը երաշխիք է զարգացան, հզօրացման ու յաւերժացման: Հետեւաբար, մեկնելով այս իրողութենէն, ինչպէս նաեւ մեր ապրած կեանքը վերանորոգելու հրամայականէն, 2017 տարին կը հռչակենք՝

«ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄԻ ՏԱՐԻ»

Անհրաժեշտ կը նկատենք, ամփոփ գիծերով, կարգ մը մատնանշումներ կատարել վերանորոգման մասին, ընդգծելով անոր առանցքային կարեւորութիւնը մեր անհատական թէ հաւաքական կեանքին մէջ: Այս ծիրէն ներս, հարկ է առաջին հերթին դառնալ աստուածային յայտնութեան աղբիւրին եւ քրիստոնէական հաւատքին ու ուսուցումներուն հիմքը հանդիսացող Աստուածաշունչին:

Ա.
ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄԸ՝
ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԻՆ ՆՊԱՏԱԿԸ

Աստուածաշունչը իր էութեամբ, իր խորքով ու նպատակով մարդը դէպի հոգեւոր ու բարոյական վերանորոգում առաջնորդող երկնային պատգամ մըն է՝ Աստուծոյ յայտնութեամբ փոխանցուած մարդուն: Այս հայեցակէտով հարկ է ճանչնալ ու ապրիլ Աստուածաշունչը: Աստուծոյ յայտնութիւնը, տիեզերքի ստեղծագործութենէն մինչեւ մարդուն ստեղծումը, մարգարէներու կոչէն մինչեւ Աստուծոյ Որդւոյն ծնունդը, Մեսիայի գալստեան պատմութենէն մինչեւ Քրիստոսի աշակերտներուն առաքելութիւնը, մէկ ու յստակ նպատակ ունէր՝ մարդկութեան ու ստեղծագործութեան փրկութիւնը, չարէն ու մեղքէն ազատագրումը, այլ խօսքով՝ ամբողջական վերանորոգումը: Այս պրիսմակէն դիտելով Աստուածաշունչը, նախ տեսնենք թէ ի՞նչ կ՚ըսէ Հին Կտակարանը:

Յատկապէս սաղմոսները ու մարգարէները լայնօրէն կը պարզեն վերանորոգման կարեւորութիւնը: Ադամն ու Եւան հաւատարիմ չէին գտնուած երկնային պատուէրին, եղծած էին իրենց աստուածային պատկերը ու վտարուած դրախտէն: Արդ, մարդը կարիքը ունէր իր աստուածային պատկերին վերստեղծման, իր մարդկային բնութեան վերանորոգման ու աստուածատուր կոչումին վերահաստատման: Սաղմոսերգուն Աստուծոյ կ՚աղերսէ թէ իր մէջ «*ուղիղ հոգի նորոգէ*» (Սղ 51.10), որովհետեւ Աստուած է աղբիւրը վերանորոգութեան, որ միաժամանակ «*երկրին երեսը կը նորոգէ*» (Սղ 104.30): Նոյն մօտեցումով ու սպասումով, մարգարէները Աստուծմէ կը խնդրեն, որ երկնային միջամտութեամբ նորոգէ մարդն ու տիեզերքը ու կոչ կ՚ուղղեն մարդուն դառնալու Աստուծոյ, սպասելով գալուստը Աստուծոյ Մեսիային:

Վերանորոգումը Նոր Կտակարանին մէջ կը ներկայացուի որպէս անյետաձգելի անհրաժեշտութիւն: Քրիստոսի մարդեղութեան նպատակը ու փրկագործական առաքելութիւնը մարդուն ու տիեզերքին վերանորոգումն էր: Արդարեւ, Նոր Կտակարանը աստուածային միջամտութեամբ մարդուն ու ստեղծագործութեան վերանորոգման պատմութիւնն է: Յայտնութեան գիրքը զայն կը խտացնէ հետեւեալ բառերուն մէջ՝ «*ահաւասիկ ամէն ինչ նոր կը դարձնեմ*» (Յյտ 21. 5):

Կեանքը իր էութեամբ Քրիստոսով նորոգուեցաւ: Քրիստոս Ինքն է աղբիւրը ու ճանապարհը վերանորոգման: Իր հրաշքներուն, առակներուն ու ուսուցումներուն մէջ Քրիստոս առանցքային տեղ յատկացուցած է վերանորոգման: Այսպէս, քահանայապետի ծառային՝ Մախկոսի կտրուած ականջը բժշկելով (Ղկ 22.51), Քրիստոս ցոյց տուաւ թէ Ի՛նքն է որ կտրուածը կը վերանորգէ: Երիքովի կոյրերուն աչքերը բանալով (Յհ 9.6-7), յիշեցուց թէ Ի՛նքն է որ մարդոց կեանքին շիջած լոյսին ձէթը կը վերանորոգէ: Կափառնայումի անդամալոյծը բժշկելով (Մր 2.10-12) շեշտեց, թէ Ի՛նքն է որ Աստուծոյ ու մարդոց միջեւ անդամալուծուած յարաբերութիւնը կը վերականգնէ: Նոյնպէս, Իր առակներուն ճամբով, Քրիստոս պատգամեց մարդոց թէ Ի՛նքն է վերանորոգիչը համայն մարդկութեան: Այսպէս, բարի Սամարացիի առակով (Ղկ 10.25-37), Քրիստոս ցոյց տուաւ թէ Ի՛նքն է գետին ինկած մարդը վերականգնողը: Անառակ որդիին առակով (Ղկ 15.11-32) պարզեց, թէ Ի՛նքն է մարդուն մէջ աստուածատիպ մարդը վերանորոգողը: Կորսուած ոչխարի առակով (Մտ 18.12-14) յիշեցուց, թէ Ի՛նքն է կորսուած մարդը վերականգնողը: Աւետարանները նաեւ կը պարզեն, թէ Քրիստոսի հետ հանդիպումը կը դառնայ կեանքի վերանորոգման առիթ: Այսպէս, հանդիպելով Պետրոս ու Անդրէաս եղբայրներուն, Քրիստոս ձկնորսները վերածեց Աստուծոյ արքայութեան քարոզիչներու (Մտ 4.18-20): Հանդիպելով Մատթէոս հարկահաւաքին, զինք դարձուց աւետարանիչը Աստուծոյ խօսքին, իսկ Զակքէոս դրամասէրը՝ բարեսէր (Ղկ 19.8): Վերջապէս, Քրիստոս հին ուխտը վերածեց նոր ուխտի (Մտ 26.28), հին մարդը՝ նոր մարդու (Եփ 4.24), հին օրէնքը՝ նոր օրէնքի (Յհ 13.34), հին ճամբան՝ նոր ճամբու (Եբր 10.20), հին ստեղծագործութիւնը՝ նոր ստեղծագործութեան (Եփ 2.10):

Վերանորոգման հրամայականին վրայ Քրիստոսի կողմէ դրուած շեշտին արձագանգեցին Առաքեալները, նորահաստատ եկեղեցիներուն ուղղած իրենց հովուական նամակներով ու քարոզախօսութիւններով: Պօղոս Առաքեալ կեանքի վերանորոգման մասին խօսելով կոչ կ՚ուղղէ նորադարձ քրիստոնեաներուն ըսելով, որ «*նորոգուած*

կեանքով ապրինք» (Հռ 6.4) եւ «*Սուրբ Հոգիին բերած նորոգութեամբ*» (Հռ 7.6) ծառայենք Աստուծոյ: Նոյն Առաքեալը նաեւ կը թելադրէ՝ «*այս աշխարհի մարդոց վարմունքը մի՛ ընդօրինակէք, այլ նորոգուած միտքերով նոր մարդ եղէք*» (Հռ 12.2) ու կը շարունակէ՝ «*ուեւէ մէկը որ Քրիստոսի միացած է՝ նոր արարած է. այլեւս չէ ան, ինչ որ էր նախապէս, որովհետեւ ամբողջութեամբ նորոգուեցաւ*» (Բ.Կր 5.17):

Նոր Կտակարանը վերանորոգումը կ՚ըմբռնէ համապարփակ իմաստով. ա) Քրիստոսով մարդը կոչուած է իր ապրելակերպը, մտածելակերպը ու գործելակերպը, այլ խօսքով՝ իր ողջ կեանքը վերանորոգելու: բ) Վերանորոգումը աստուածային պարգեւ է տրուած մարդուն, որ մարդը կը մղէ Աստուծոյ մօտենալու: գ) Վերանորոգումը միաժամանակ երկնային պատուէր է՝ Աստուծոյ Որդւոյն մարդեղութեամբ վերածնուելու: դ) Քրիստոսով իրագործուած վերանորոգումը աշխարհի չար ուժերը ու ապականիչ երեւոյթները յաղթահարելու ազդու միջոց է: ե) Վերանորոգումը համատիեզերական նպատակ ունի, որովհետեւ Քրիստոսով ողջ տիեզերքը վերստեղծուեցաւ:

Բ.
ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄԸ՝
ԵԿԵՂԵՑԻՈՅ ԱՌԱՔԵԼՈՒԹԵԱՆ ԱՌԱՆՑՔԸ

Աստուածաշունչէն եկող վերանորոգման պատգամը դարձաւ եկեղեցւոյ առաքելութեան հէնքը ու կիզակէտը: Պատմութեան ընթացքին եկեղեցին ո՛չ միայն իր սպասաւորներուն, հովուական թուղթերուն, ընկերային ծառայութեան, մարդասիրական աշխատանքներուն եւ հոգեւոր ու բարոյական դաստիարակութեան ճամբով, այլ նաեւ տեղական թէ տիեզերական ժողովներու հաստատած կանոններով, իր կեանքին ու առաքելութեան օրակարգին վրայ միշտ առաջնահերթ տեղ տուաւ վերանորոգման:

Արդարեւ, եկեղեցւոյ հայրերը իրենց ուսուցումներուն մէջ լայնօրէն անդրադարձած են վերանորոգութեան, յատկապէս՝ հոգեւոր ու բարոյական բնագաւառներէն ներս: Հին հայրերու գրականութիւնը հարուստ է վկայութիւններով ու խոր մեկնաբանութիւններով: Այսպէս, Որոգինոս Աղեքսանդրացին կ՚ըսէ, թէ՝ չի կրնար նորոգուիլ միտքը այն մարդուն, որ անտարբեր է Աստուածաշունչին նկատմամբ: Յովհան Ոսկեբերան կը յիշեցնէ, թէ Քրիստոսի հետեւողներուն համար երկիրը պիտի վերանորոգուի ժամանակներու վախճանին: Եփրեմ Խուրի Ասորին, կը վկայէ թէ Քրիստոս Ինքն է միայն, որ կը վերանորոգէ մեր կեանքը: Գրիգոր Նիւսացին մարդու եւ Աստուծոյ միջեւ հաշտութիւնը կը նկատէ նախապայման համայն մարդկութեան ու տիեզերքի վերանորոգման:

Մեր եկեղեցւոյ հայրերը եւս ընդգծած են Քրիստոսով վերանորոգուելու անհրաժեշտութիւնը: Ս. Գրիգոր Լուսաւորիչ կը շեշտէ, թէ Տիրոջ խօսքը կը վերանորոգէ մեր կեանքը: Յովհաննէս Մանդակունի կ՚ըսէ, թէ սուրբ Հաղորդութեան մօտենալը կը վերանորոգէ մեր հոգին: Ներսէս Շնորհալին Քրիստոսը կը ներկայացնէ որպէս նորոգիչը ապականեալ տիեզերքին ու մեղքով հինցած մեր անձերուն: Գրիգոր Նարեկացին Քրիստոսը կը նկատէ մեղքի, ցաւի, սատանայի ու մահուան ճիրաններուն մէջ տուայտող մարդու կեանքին միակ վերանորոգիչը: Վերջապէս, Գրիգոր Տաթեւացին կը յիշեցնէ, թէ ո՛չ ոք կրնայ մեզ վերանորոգել բայց միայն մեր Արարիչը: Հայ եկեղեցւոյ ժողովները եւս յաճախակի կերպով անդրադարձած են վերանորոգման հրամայականին՝ բնականաբար հոգեւորը միշտ նկատելով աղբիւրը ու մեկնակէտը ճշմարիտ վերանորոգման:

Գ.
ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆԸ՝
ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՀԱՅԵՑԱԿԷՏՈՎ

Ըսինք ու կը կրկնենք՝ վերանորոգումը քրիստոնէական կեանքի ամենէն հիմնական պայմաններէն մէկն է, եւ իր ուղղութիւնը կը ստանայ ընդհանրապէս Աստուածաշունչի ուսուցումներէն ու յատկապէս Աստուծոյ Որդւոյն երկրաւոր առաքելութենէն:

Քրիստոնէական մօտեցումով մա՛րդն է վերանորոգման կիզակէտը: Պօղոս առաքեալ Քրիստոսի առաքելութեան նպատակը կը խտացնէ հետեւեալ բառերուն մէջ.- «*Մոռցէ՛ք հին մարդը եւ եղէք նո՛ր մարդ*» (Եփ 4.22-24): Քրիստոսով հին մարդը վերանորոգելու ու նոր մարդ դառնալու կոչը միշտ կը մնայ եկեղեցւոյ ճամբով մեզի հասնող քրիստոսահիմն պատգամ: Մարդու վերանորոգումը հարկ է ըմբռնել համապարփակ հայեցակէտով.- ֆիզիքականէն անդին հոգեւոր ու բարոյական արժէքներու վերականգնումով. մարդ-Աստուած յարաբերութեան վերահաստատումով. մեր շրջապատին, մեր ընտանիքին, մեր համայնքին ու ազգին հետ մեր յարաբերութեան բարելաւումով. եւ այս բոլորին առանցքը ու մեկնակէտը կազմող ինքնաքննութեամբ ու ինքնասրբագրումով: Քրիստոս վերանորոգման Իր պատգամը կեդրոնացուց մարդ անհատին վրայ, որովհետեւ մարդը արժէք է Աստուծոյ համար եւ մարդու վերանորոգումը նախապայման է համայն աշխարհի ու տիեզերքի վերանորոգման:

Մարդուն մէջ աստուածատիպ մարդը քանդող ներկայ աշխարհի ապականիչ հոսանքներուն դիմաց որքա՜ն դժուար է մարդու վերանորոգումը: Բազմաթիւ ու բազմատեսակ մտահոգութիւններով ու մարտահրաւէրներով

կլանուած ներկայ ընկերութեան պատկանող մարդը յաճախ կը մոռնայ իր անձը. յաճախ անոր կը պակսի առիթը իր անձին հետ առանձնանալու ու խորհրդածելու: 1935-ին Ֆրանսացի մեծ մտածող ու աշխարհահռչակ բժիշկ Ալեքսիս Գարելի հեղինակած գիրքը «Մարդը՝ այս Անծանօթը» այսօր եւս այժմէական է: Առանց Աստուծոյ մարդը անծանօթ է իր անձին նկատմամբ: Մարդու վերանորոգումը կը սկսի ինքնաճանաչումով եւ իր աստուածատուր կոչումին նկատմամբ իր ունեցած հաւատարմութեան վերահաստատումով:

Հայ մարդն ալ ենթակայ է զինք շրջապատող իրականութիւններուն ու անոնց ազդեցութիւններուն: Հետեւաբար, հայ մարդու վերանորոգումը առաջնահերթ կարեւորութիւն կը ներկայացնէ, որովհետեւ մեր ազգին, մեր եկեղեցւոյ, մեր հայրենիքին, մեր գաղութներուն ու մեր կառոյցներուն հիմքը ու մեկնակէտը հայ մարդն է: Հարկ է հայ մարդը վերանորոգել՝ առաջին հերթին իր մէջ ամրացնելով քրիստոնէական հաւատքը: Քրիստոնէութիւնը, ինչպէս հինգերորդ դարուն մեր պապերը ըսին, մեզի համար սոսկ հագուստ չէ. ան մեր արեան, էութեան ու գոյութեան անքակտելի մասն է: Հպարտ ենք, որ առաջին քրիստոնեայ ազգը եղած ենք: Սակայն, այս արդար հպարտութիւնը հայ մարդը պէտք է մղէ աւելի զօրեղ ու գիտակից կապուածութեան քրիստոնէական հաւատքին: Հարկ է, որ հայ մարդը քրիստոնէական հաւատքը ապրի որպէս հոգեւոր կենսաւորման ու լիցքաւորման աղբիւր: Հարկ է, որ հայ մարդը վերանորոգուի իր մէջ արմատացնելով իր հաւատարմութիւնը բարոյական արժէքներուն նկատմամբ: Քրիստոնէութիւնը կեանքի որակ է, որ անհատի մը կամ ընկերութեան մը կեանքին մէջ գործնապէս կ՚արտայայտուի հոգեւոր ու բարոյական արժէքներու տիրական ներկայութեամբ: Արդ, հայ մարդուն կեանքին մէջ տակաւ նահանջող բարոյական ու հոգեւոր արժէքներու վերականգնումը կը նկատենք անյետաձգելի հրամայական:

Վերանորոգման կարիքը ունեցող երկրորդ մարզը համայնական կեանքն է: Մարդը ինքնանպատակ գոյութիւն մը չէ: Քրիստոնէութիւնը մարդը կը դիտէ ու կ՚արժեւորէ ընկերութեան հաւաքական կեանքի շրջագծէն ներս: Անհատ մարդոց առնչուած իր հրաշքներուն, առակներուն ու ուսուցումներուն ճամբով Քրիստոս կը մօտենար ժողովուրդին: Ժողովուրդն էր վերանորոգման ձգտող Քրիստոսի առաքելութեան նպատակակէտը: Քրիստոս Աստուծմէ հեռացած ժողովուրդը դարձուց Աստուծոյ ժողովուրդ, նոր ժողովուրդ՝ աստուածակեդրոն ու աստուածանպատակ կեանքով:

Հայ եկեղեցին, որպէս ժողովուրդի եկեղեցի ու հաւատքի համայնք, կարիքը ունի վերանորոգման: Այս ծիրէն ներս վերանորոգումը պէտք չէ ըմբռնել որպէս սոսկ վարչա-կազմակերպչական կամ ծիսական բարեկարգում, այլ՝ եկեղեցւոյ պատկանելիութեան նախանձախնդրութիւնը առաւել խորացնելու, եկեղեցւոյ անդամներուն միջեւ փոխյարաբերութիւնը աւելի սերտացնելու, անոր ներքին կեանքը աւելի պայծառակերպելու, ներքին թէ արտաքին աւետարանչութիւնը աւելի հզօրացնելու, ընկերային ծառայութեան նոր թափ տալու, քրիստոնէական դաստիարակութիւնը աւելի կազմակերպելու ձգտող՝ ծրագրուած ու հանգրուանային զարգացումով աճող գործընթաց: Այլ խօսքով, եկեղեցւոյ վերանորոգումը հարկ է իրագործել եկեղեցին իր վայրէն ու կառոյցէն անդին տանելու եւ Սուրբ Հոգւոյն վերանորոգող ներկայութեամբ հզօրացած առաքելութեան ու ծառայութեան վերածելու հաւաքական ու մնայուն ճիգ: Այսպէ՛ս եղաւ առաքելական եկեղեցին. հալածուեցաւ, սակայն տարածուեցաւ. նահատակուեցաւ, սակայն Սուրբ Հոգւոյն ներգործութեամբ միշտ մնաց կենսունակ ու հզօր: Եկեղեցւոյ հոգեւոր վկայութեան ու ծառայական յանձնառութեան վերանորոգումով մեր ժողովուրդին կեանքը կոչուած է վերանորոգուելու՝ քրիստոնէական արժէքներու ներթափանցումով ու կենսագործումով:

Աստուածաշունչը վերանորոգումը կ՚առնչէ նաեւ ստեղծագործութեան: Ինչպէս Առաքեալը կ՚ըսէ՝ Քրիստոսով ամբողջ տիեզերքը վերստեղծուեցաւ ու վերանորոգուեցաւ (Կղ 1.16): Քրիստոսի փրկագործական խորհուրդը մարդէն անդին կը ներառէ ողջ տիեզերքը: Ուղղափառ աստուածաբանութեան յատուկ այս շեշտաւորումը կը նկատենք էական: Մեր եկեղեցւոյ աստուածաբանական մտածողութեան ու ծէսին եւ ընդհանրապէս հայրական գրականութեան մէջ եւս այս մօտեցումը տիրական է: Ստեղծագործութիւնը, ներկայ ժամանակներուն կենսոլորտ բացատրութեամբ ծանօթ, անբաժանելի մասն է եկեղեցւոյ կեանքին ու առաքելութեան, որովհետեւ քրիստոնէական հաւատքի ու մտածողութեան մէջ Աստուած-մարդ-ստեղծագործութիւն յարաբերութիւնը ու յարակցութիւնը պէտք է դիտուի որպէս մէ՛կ ու անբաժանելի ամբողջութիւն: Եթէ կենսոլորտային ներկայ հարցերուն մէկ մասը աղերս ունի տիեզերքի ինքնա-կազմաւորման հոլովոյթին հետ, սակայն մեծ մասը հետեւանք է մարդուն կողմէ ստեղծագործութեան չարաշահումին: Արդ, տիեզերքի առողջ ու անվթար պահպանումը եւ անոր վերանորոգումը մարդուն աստուածատուր պարտաւորութիւնն է:

Դ.
ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆԸ՝ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՅԵՑԱԿԷՏՈՎ

Կարելի չէ եւ ճի՛շդ ալ չէ բաժանման գիծ մը քաշել քրիստոնէական ու ազգային մօտեցումներուն, մտահոգու-

թիւններուն կամ արժեւորումներուն միջեւ: Հայ կեանքի այս երկու տարածքները անքակտելի կերպով միաձուլուած են՝ քրիստոնէութեան հայացումով ու հայութեան քրիստոնէացումով: Սակայն փորձենք վերանորոգումը տեսնել, այս անգամ առաւելաբար ազգային հայեցակէտով՝ միշտ հիմք ունենալով քրիստոնէական մօտեցումը:

Ազգերու պատմութեան մէջ թուականներ ու դէպքեր կան, որոնք կը դառնան յուշարար ու մարտահրաւէր վերանորոգման: Մենք այսպէս կը բնորոշենք 2015 տարին: Արդարեւ, Հայոց Ցեղասպանութեան 100-ամեակը, Հայաստանի անկախութեան 25-ամեակը, Ղարաբաղի ազատագրութեան 25-ամեակը ու Հայոց Ցեղասպանութեան նահատակներու սրբադասումը, անկասկած որ մեր ժողովուրդի վերանորոգման պերճախօս վկայութիւնները դարձան: Միաժամանակ, Հայաստանի դիմագրաւած տնտեսական դժուարութիւնները, շարունակուող արտագաղթը, Ղարաբաղի ապրիլեան պատերազմը, Սուրիոյ հայութեան տագնապը, ինչպէս նաեւ Սփիւռքի դիմագրաւած բազմազան ու այլազան հիմնահարցերը՝ վտանգի ենթարկուած հայու ինքնութենէն մինչեւ արեւմտահայերէնի նահանջը, մշակութային արժէքներու աղաւաղումէն մինչեւ համաշխարհայնացումի բացասական հետեւանքները, ազդանշաններ են լուրջ ու համապարփակ վերաքննութեան ու վերարժեւորման վրայ հիմնուած համահայկական մասշտապով վերանորոգման անյետաձգելի հրամայականին:

- Առաջին հերթին մեր հայրենիքին վերանորոգումը, քսանհինգ տարիներու փորձառութեան լոյսին տակ, կը նկատենք էական: Հայրենիքը միայն հող չէ. հողը իմաստաւորողը, անոր ինքնութիւն ու հզօրութիւն տուողը ժողովուրդն է: Մեր հայրենի ժողովուրդին կենսամակարդակի բարելաւումը ու հայրենիքին հանդէպ անոր ուժեղ կապուածութիւնը ազդու միջոցներ են հայրենիքի առաւել զօրացման: Այս շրջագիծէն ներս առնուած կարգ մը բարեկարգչական քայլերը՝ սահմանադրութեան բարեփոխումէն սկսեալ մինչեւ տնտեսական կացութեան բարելաւում, բնականաբար կարեւոր քայլեր են, որոնք պէտք է շարունակուին վերանորոգ թափով ու ծրագրուած աշխատանքով:

- Նոյնպէս Ղարաբաղի անկախութեան ամրացումը կ՝ապահովուի միայն մեր ժողովուրդի ամուր կապուածութեամբը իր իրաւունքներուն ու մանաւանդ արիւնով ու քրտինքով ազատագրուած իր հողին: Մեր ժողովուրդի բոլոր զաւակները Հայաստանի, Ղարաբաղի թէ Սփիւռքի մէջ իրենց կարելին պէտք է ի գործ դնեն որպէսզի Ղարաբաղի անկախութեան ամրապնդումը դառնայ մնայուն ճիգ: Այս ուղղութեամբ որեւէ նահանջ կրնայ դառն ու անդարմանելի հետեւանքներ ունենալ թէ՛ Հայաստանին եւ թէ ընդհանրապէս մեր ժողովուրդի պահանջատիրական պայքարին մէջ:

- Սփիւռքի վերանորոգումը աւելի բարդ մարտահրաւէր մըն է, նկատի ունենալով անոր պարզած բազմատարած ու բազմագոյն իրավիճակը, ներքին բաղկացութիւնը, դրուածքը ու շրջապատը, ինչպէս նաեւ իւրաքանչիւր գաղութին իւրայատուկ պայմանները: Փաստօրէն երեք տեսակի խաւերէ բաղկացած է ներկայ Սփիւռքը.- Ցեղասպանութենէն վերապրողներ, նախկին Սովետական երկիրներէ հեռացողներ եւ Հայաստանէն արտագաղթողներ: Սփիւռքը վերանորոգման առաջնորդող մեր ճիգը պէտք է ըլլայ միաժամանակ համասփիւռքեան եւ համագաղութային, բնականաբար մարտավարական ու ռազմավարական տարբեր մօտեցումներու ու մեթոտներու կիրարկումով: Առաջին հերթին անհրաժեշտ է ներգաղութային շրջագծէն ներս, տարբեր մտածելակերպ, գործելակերպ ու կենցաղակերպ ունեցող յիշեալ երեք խաւերուն միջեւ ներքին ներդաշնակութիւն յառաջացնել: Գաղութ մը վերանորոգման ընթացքի մէջ կարելի է դնել վերարժեւորման ենթարկելով անոր կառոյցները իրենց դրուածքով ու գործունէութեամբ, շրջապատին հետ աւելի ազդու յարաբերութիւն մշակելով, ձեւական ու պատահական դարձող Հայաստանին հետ յարաբերութեան նոր որակ տալով, վերջապէս, անոր հայկական ինքնութիւնը պահող հայ դպրոցը վերակազմակերպելով եւ անոր հոգեւոր ինքնութիւնը ու բարոյական առողջութիւնը պաշտպանող եկեղեցին պայծառացնելով իր ծառայական առաքելութեամբ:

- Հայաստանին ու սփիւռքին, մեր ողջ ազգին վերանորոգման նախապայմանը ու երաշխիքը, ինչպէս շեշտեցինք, հայ մարդու վերանորոգումն է: Այս համոզումը պէտք է հիմք ծառայէ մեր մտածումներուն, մօտեցումներուն ու նախաձեռնութիւններուն: Հայ մարդը խիստ կարիքը ունի վերանորոգման: Արդարեւ, վերանորոգումը սոսկ պակասը ամբողջացնել չէ, թերին շտկել չէ. այլ՝ լաւէն լաւագոյնին ձգտիլ է, ներկայ պայմաններու յարաբերաբար մեր կեանքը, մեր անձը, մեր գործը վերաքննել է ու զանոնք նոր կարելիութիւններով հարստացնել է, նոր մարտահրաւէրներու յարաբերաբար նոր մօտեցումներ որդեգրել է, նոր իրագործումներու ի խնդիր նոր միջոցներ որոնել է ու նոր հորիզոններու բացուիլ է: Արդ, անհրաժեշտ է հինէն նորին ուղղուիլ, անցեալէն ներկային նայիլ ու ներկայէն ապագային ընթանալ՝ վերանորոգ տեսիլքով ու յանձնառութեամբ եւ միշտ ինքնաքննարկումի ու ինքնասրբագրումի քաջութիւնը որպէս ուղեգիծ ունենալով:

Ա՛յս է ճշմարիտ վերանորոգումը: Յիշենք Ներսէս Շնորհալի Հայրապետին հետեւեալ պարզ բայց խորիմաստ բառերը, զորս յաճախ աղօթքի մրմունջով կ՝արտասանենք եկեղեցւոյ կամարներուն ներքեւ՝ «*Նորոգող հնութեանց,*

Նորոգեա՛ եւ զիս, Նորո՛գ զարդարեա՛»:

Ե.

ԴԷՊԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ

Քրիստոնէական ուսուցումներու լոյսին տակ, ինչպէս նաեւ մեր ազգային մտահոգութիւններու հրամայականին դիմաց, վերանորոգման շուրջ Մեր կատարած յիշեցումներն ու ընդգծումները վստահաբար մեր ժողովուրդի զաւակները պիտի մղեն լրջօրէն մտածելու վերանորոգման խիստ կենսական կարեւորութեան մասին: Արդարեւ, եթէ մեր համայնական կեանքը, հայ մարդու վերանորոգումը ունենալով որպէս մեկնակէտ, իր բոլոր մարզերով, դրրուածքներով ու արտայայտութիւններով համապարփակ ու մնայուն վերանորոգման գործընթացքի մէջ չդրուի, ան պիտի ընթանայ դէպի մեկուսացում, աղքատացում ու ճահճացում: Վերանորոգումը պատահական, միակողմանի կամ ձեւական քայլ մը չէ, եւ պէտք չէ դառնայ. այլ՝ խորապէս մտածուած, լրջօրէն ուսումնասիրուած ու իրապաշտօրէն ծրագրուած գործընթաց մը՝ յառաջատուական կերպով, նպատակասլաց տեսլականով ու հաւաքական մասնակցութեամբ իրագործելի: Վստահ ենք որ մեր ժողովուրդի զաւակները ու յատկապէս մեր կեանքի բոլոր բնագաւառներէն ներս գործող ու ծառայող պատասխանատուները, գոյութենական կերպով կը զգան վերանորոգման կարիքը՝ արմատական ու արագ փոփոխութիւններով բնորոշուող համաշխարհայնացած ներկայ ընկերութեան կեանքին մէջ: Արդարեւ, նոյնը կրկնելը, նոյնը պահելը, միայն անցեալին նայիլը, միայն եղածով հպարտանալը մարդը, կառոյցը կամ գաղութը կը պահեն անցեալին մէջ՝ անհաղորդ ներկայ իրականութիւններուն: Ինչպէս տիեզերքի բոլոր տարրերը զարգացման բնական հոլովոյթի մէջ են, այնպէս ալ մարդկային կեանքը իր բոլոր մարզերով, ներքնապէս ու արտաքնապէս, վերանորոգման, յառաջդիմութեան ու այժմէականացման մնայուն ընթացքի մէջ պէտք է ըլլայ:

Եկեղեցին կեանքի վերանորոգիչ Քրիստոսին կողմէ պատուէր ունի դառնալու մղիչ ուժը յատկապէս հոգեւոր ու բարոյական վերանորոգման, որ հիմքը կը կազմէ ընկերութեան կեանքի ճշմարիտ վերանորոգման: Արդ, մեր ժողովուրդին ղեկավարութիւնը ստանձնած ազգայիններ, հոգեւորականներ թէ աշխարհականներ, մտաւորականներ թէ ուսուցիչներ, մշակներ թէ քաղաքական ղեկավարներ, այրեր թէ կիներ, պարտաւորութիւնը ունին իրենց ամբողջական ու գործօն մասնակցութիւնը բերելու մեր կեանքը վերանոգման առաջնորդող աշխատանքներուն: Վերանորոգման այս յոյժ կարեւոր գործընթացին դրօշակիրը պէտք է դառնայ հայ երիտասարդը, որովհետեւ ան մօտէն հաղորդ է ներկայ աշխարհի խնդիրներուն, մտահոգութիւններուն ու մարտահրաւէրներուն եւ հետեւաբար, ան թէ՛ գործնապէս կարիքը կը զգայ վերանորոգման, եւ թէ իր մասնագիտութեամբ ու նոր մտածումներով կարեւոր նպաստ կրնայ բերել վերանորոգման հաւաքական ճիգին:

Այս մտածումներով եւ 2017 տարին մեր կեանքի վերանորոգման առաջին ու վճռական հանգրուանը նկատելու հեռանկարով կոչ կ՝ուղղենք.-

- Մեր հոգեւոր մշակներուն՝ եկեղեցւոյ առաքելութեան ճամբով շեշտելու կենսական անհրաժեշտութիւնը հոգեւոր ու բարոյական վերանորոգման, միաժամանակ՝ մասնակից դառնալով նոյն աշխատանքին նպաստող բոլոր նախաձեռնութիւններուն:

- Մեր մտաւորականներուն՝ իրենց խօսքով ու գրիչով արծարծ պահելու վերանորոգման առանցքային կարեւորութիւնը մեր ազգային կեանքէն ներս:

- Մեր համայնքային, կուսակցական թէ քաղաքական ղեկավարներուն՝ իրենց ստանձնած պատասխանատուութեան ծիրէն ներս առաջնահերթութիւն տալու մեր կառոյցները վերանորոգման առաջնորդող ծրագիրներուն ու աշխատանքներուն:

- Մեր ազգի իւրաքանչիւր զաւակին՝ յիշեցնելով, որպէս հարազատ անդամը մեր մեծ ընտանիքին, թէ կոչուած է իր ապրած կեանքի որակով ու հարուստ գործերով կարեւոր նպաստ բերելու մեր եկեղեցւոյ, ազգին ու հայրենիքին առաւել կազմակերպման, ծաղկման ու վերանորոգման:

Կ՝օրհնենք մեր ժողովուրդի սիրելի զաւակները եւ կ՝աղօթենք առ Բարձրեալն Աստուած, որ առողջութեան, յաջողութեան ու երջանկութեան բարիքներով ծաղկազարդէ մեր ժողովուրդին կեանքը:

Հայրական ջերմ սիրով,

Աղօթարար՝
ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

1 Յունուար, 2017
Անթիլիաս, Լիբանան

Ú Æêàôêæ ²¼¶² î àÐØÀ

«*Այս է Յիսուս Քրիստոսի՝ Դաւթի որդու, Աբրահամի որդու ազգաբանութիւնը*» (Մտ 1.1):

Ինչքա՜ն գեղեցիկ է եւ նպատակայարմար մեր Հայաստանեայց Եկեղեցու օրացոյցը, ըստ որի, հազիւ Նոր տարի թեւակոխած, առաջին իսկ օրերին, հաւատացեալն սկսում է մտածել իր Փրկչի առաջին ու մեծագոյն խորհրդի մասին, որն է՝ մարդեղացեալ ու մանկացեալ Յիսուսի Ծննդեան խորհուրդը:

Աւետարանների դասաւորման մէջ Մատթէոսի Աւետարանն առաջինն է, եւ հետեւաբար Մատթէոս Աւետարանիչն առաջին աւետողն է, ով պատմում է Յիսուս Քրիստոսի Ծննդեան մասին: Մատթէոսն իր Աւետարանը գրել է ժամանակագրական կարգով, եւ հետաքրքրական է, որ նա Ծննդեան դրւագն սկսում է Յիսուս Քրիստոսի ազգաբանութեամբ: Ժամանակի ետառաջութիւն կայ իր ներկայացման մէջ. սկսում է Յիսուս Քրիստոսի մեկնարկումով դէպի անցեալ, երկու ոստումով հասնում է Աբրահամին, յիշելով միայն Դաւիթ թագաւորին, եւ ապա Աբրահամից սկսեալ մանրամասնօրէն իջնում է մինչեւ նորածին Յիսուսը, ցոյց տալով Յիսուսի ազգաբանութեան սերնդական շառաւիղը:

Գուցէ հարց տանք թէ ի՞նչ նշանակութիւն ունի արդեօք ազգատոհմի կամ ազգաբանութեան ներկայացումը Քրիստոսի Ծննդեան դրւագի հետ: Նպատակը յստակ է. առաջին հերթին պայման է իմանալ, որ Քրիստոսը Աբրահամի որդին է, իսկ երկրորդ հերթին՝ թէ Նա սերում է Իսահակի շառաւիղից, եւ ո՛չ թէ Իսմայէլի: Յիսուսը միայն հրեայ ժողովուրդի Փրկիչը չէ, այլ՝ ամբողջ մարդկութեան Փրկիչը, ուստի նաեւ մեր Փրկիչը, ինչ որ Մատթէոս Աւետարանի գլխաւորագոյն նպատակներից մէկն է:

Պօղոս Առաքեալի Հռոմէացիներին գրած նամակի 4-րդ գլխի մէջ մանրամասնօրէն բացատրւում է, թէ ինչ նշանակութիւն եւ կարեւորութիւն ունի Աբրահամի զաւակ կամ շառաւիղ լինելը, իսկ նոյն Հռոմէացիների նամակին 9-րդ գլխի 6 եւ 7 համարների մէջ աւելի ճշգրիտ եւ մեկնաբանօրէն բացատրւում է, թէ ինչո՛ւ անհրաժեշտ է շեշտել, որ Յիսուսի ազգատոհմը կամ ազգաբանութիւնը, երբ սկսում է Աբրահամից, շարունակւում է ո՛չ թէ Իսմայէլի, այլ Իսահակի շառաւիղով:

Քրիստոսի Ծնունդը մեզ մի պահ մտածել է տալիս մեր մարդկային ծննդեան, բայց մանաւանդ մեր աձնական կեանքի մասին: Աւելի քան երկու հազարամեակներ առաջ Քրիստոսը ծնւեց մսուրի մէջ, մինչ մենք ծնւել ենք տարբեր պայմանների եւ պարագաների մէջ: Կոչուած չենք բաղդատական կատարելու, այլ հրաւիրուած ենք խոկալու: Եթէ մի պահ մտածենք տեսալ բացատրութիւնների հիման վրայ, ի՞նչ եզրակացութեան կը յանգենք արդեօք: Նորածին կամ մանուկ Յիսուս Քրիստոսի շառաւիղը շարունակո՞ւմ է եւ մինչեւ մեզ է հասնո՞ւմ արդեօք:

Վերոյիշեալ բացատրութիւնները եւ մանաւանդ նրանց մեկնաբանութիւնները գալիս են մեզ փոխանցելու մի հիմնական ճշմարտութիւն: Մանուկ Յիսուսի շառաւիղը շարունակւում է մինչեւ մեր օրերը, սակայն հարցը կայանում է այնտեղ, որ մենք մեզ արժանի կամ հարազատ անդամ դարձնո՞ւմ ենք այդ շառաւիղին: Մեր սկզբնական վիճակի մէջ, մեր նախահայրերից սկսեալ, մենք այդ շառաւիղից դուրս էինք, սակայն խաչելութեան ու մանաւանդ փրկութեան համար ծնւած մանկացեալ Փրկիչը այսօր եւս եկել է մեզ հրաւիրելու եւ որպէս հարազատ անդամներ արժանի դարձնելու այդ շառաւիղին:

Մեր Փրկչի՝ Յիսուս Քրիստոսի Ս. Ծննդեան տօնը ո՛չ միայն մեր եկեղեցու մեծագոյն տաղաւարներից մէկն է, այլ նաեւ՝ մեր կեանքի լաւագոյն առիթներից մէկը, որպէսզի նախ քննենք մեր հաւատքը, եւ ապա մեր անձերը՝ որպէս հաւատացեալ քրիստոնեաներ: Երկնաւոր Հօր՝ Աստծու առաջին ստեղծած մարդը մեր մեղաւոր նախահայրն էր, ով կոչւեց Ադամ, եւ որ իր մեղանչումով մարդ արարածին գերեվարեց մեղքի լուծի տակ, մինչ «երկրորդ արարչութեամբ» երկրորդ «Ադամ»-ը, Ով կոչւեց Յիսուս, դարձաւ թէ՛ սրբագրիչը մեղքերի եւ թէ՛ հիմքը մեր հաւատքի: Այո՛: Այսօր մեր միայն Փրկիչը չծնւեց, այլ նաեւ մեր հաւատքի հիմքը ծնւեց (Կղ 2.6-7), Ով խանձարուրի մէջ փաթաթւեց եւ մսուրի մէջ դրւեց:

Այսօր Յիսուս Քրիստոսի Ծննդեան տօնն է, ուստի եկէ՛ք մեր անձերը ինքնաքննութեան հայելիների դիմաց կանգնեցնենք եւ ուշադրութեամբ դիտենք ու զննենք մեր ներաշխարհը: Փորձենք կաղանդի կամ նոր տարւայ առթիւ մենք եւս նորոգւել, կատարելով հետեւեալ պարտականութիւնները, որպէս քրիստոնեաներ.

- Նախ ողորմութիւն փորձենք բաշխել մեր չորսդին, որպէսզի մեր եղբայրներին եւ քոյրերին տալիք մաքուր ու բարի սրտից բխած մեր նւէրները հասնեն ծնեալ Փրկչին:
- Երկրորդ, փորձենք մաքրել մեր անձերն ու մեր ներաշխարհը ամէն տեսակի արատներից ու մեղքերից:
- Երրորդ, փորձենք ապրել մի աստւածահաճոյ կեանք, լեցուն բարեգործութիւններով:
- Իսկ վերջինը, որ կարեւորագոյնն է, զօրացնենք մեր հաւատքը, որպէսզի հաւատքի միջոցով կարողանանք անդամագրւել եւ հարազատները դառնալ Աբրահամով սկսած, Իսահակով բաժանւած եւ Դաւիթով զօրացած մեր Տիրոջ ու Փրկչի՝ Յիսուս Քրիստոսի շառաւիղին, եւ արժանանաք Երկնքի Արքայութեանը եւ Ամենասուրբ Երրորդութեան օրհնութեանն ու շնորհքներին, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Սիփան Ծ. Վրդ. Քէչէճեան
Կաթողիկոսական Փոխանորդ
Սպահանի Հայոց Թեմի

ՍՊԱՀԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ 16-ՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՊԱՏԳԱՄԱՒՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ Ն.Ջ. ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ ԺՈՂՈՎՐԴԻ ՀԵՏ

Սպահանի հայոց թեմի 16-րդ նստաշրջանի Պատգամաւորական Ժողովի Ընտրական յանձնախմբի կազմակերպութեամբ, հինգշաբթի եւ ուրբաթ՝ փետրուարի 16 եւ 17-ի երեկոյեան, ժամը 7:30-ին, Ն.Ջ. Հայ Մ.Մ. «Արարատ» միութեան սարհում, Նոր Ջուղայի ընտրատարածքի 15 թեկնածուները հանդիպեցին ժողովրդի հետ:

Հինգշաբթի օրուայ հանդիպման ընթացքում ելոյթ ունեցան՝ Սեդիկ Այլազեանը, Վահէ Շահիջանեանը, Անուշ Էստիկը (Յովհաննիսեան), Նորուիկ Պօղոսեանը, Նիկիտ Միրզայեանը, Մկրտիչ Աւետումեանն ու Թաթուլ Օհանեանը, իսկ յաջորդ օրը՝ ուրբաթ՝ Արշալոյս Դաւթեանը, Նարինէ Տէր-Գրիգորեանը, Ռազմիկ Տէր-Գրիգորեանը, Անդրէ Քալանթար-Օհանեանը, Գեղարդ Մանսուրեանը, Արմոնդ Բաղրամեանը, Վազգէն Թահմազեանն ու Վազրիկ Վարդանեանը:

Ծրագրի համաձայն, սկզբում թեկնածուներն առանձնաբար ներկայացրին իրենց կենսագրականն ու ծրագրերը, ապա երկրորդ բաժնում պատասխանեցին ներկաներին յուզող հարցերին:

Երկօրեայ հանդիպումները վարեց Արթին Մուրադեանը:

Յատկանշական է, որ թեմի 16-րդ նստաշրջանի Պատգամաւորական Ժողովի ընտրութիւնները կայանալու են ուրբաթ՝ փետրուարի 24-ին եւ Նոր Ջուղայի ընտրատարածքից ընտրելու են 12 պատգամաւորներ:

***

ԺՈՂՈՎՐԴԻ ԱԿՏԻՒ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԵԱՄԲ ԿԱՅԱՑԱՆ ՍՊԱՀԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ 16-ՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՊԱՏԳԱՄԱՒՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Ուրբաթ՝ փետրուարի 24-ին, Սպահանի հայոց թեմի չորս ընտրատարածքներում՝ Նոր Ջուղայում, Շահինշահրում, Շիրազում եւ Փերիայում կայացան թեմի 16-րդ նստաշրջանի Պատգամաւորական Ժողովի ընտրութիւնները:

Նոր Ջուղայի ընտրատարածքում քւէարկութիւնը մեկնարկեց առաւօտեան ժամը 8-ին՝ նախատեսուած երկու ընտրատեղամասերում: Ժողովուրդը խուռներամ շարքերով մասնակցելով ընտրութիւններին՝ յառաջիկայ չորս տարիների համար ընտրեց այս նստաշրջանի 12 պատգամաւորներին:

Միջօրէից առաջ Շահինշահրի հայ համայնքի հոգեւոր տեսուչ գերպ. Տ. Անանիա Ծ. վրդ. Գուճանեանը, արժն. Տ. Վազգէն քհնյ. Քէօշկէրեանը, Սպահանի հայոց թեմի Պատգամաւորական ժողովի դիւանի, Կրօնական եւ Թեմական խորհուրդների ատենապետերը, շրջանի Հայ Դատի յանձնախմբի ներկայացուցիչն ու

Նոր Ջուղայի ընտրատարածքի թեկնածուները միասնաբար ներկայացան Զհարսու պողոտայի ընտրատեղամաս («Կատարինեան» դպրոցի նախկին շէնք), որտեղ էլ քւէարկեցին: Միւս ընտրատեղամասում կատարուող աշխատանքին ծանօթանալու նպատակով՝ վերոնշեալ պատուիրակութիւնն այցելեց նաեւ «Արմէն» դպրոց:

Նշենք նաեւ կէսօրից յետոյ ժամը 3-ին, «Արմէն» դպրոց ընտրատեղամասի քւէատուփը շուրջ մէկ ժամով փոխադրուեց հայոց ազգ. ծերանոց՝ սոյն հանգստի տան բնակիչներին առիթ ընձեռելով իրենց ազգային պարտականութիւնը կատարելու:

Սպահանի հայոց թեմի 16-րդ նստաշրջանի Պատգամաւորական Ժողովի Ընտրական յանձնախմբի յայտարարութեան համաձայն Նոր Ջուղայի ընտրատարածքում առաւելագոյն ձայները հաւաքելով, որպէս պատգամաւոր ընտրուել են Թաթուլ Օհանեանը, Սեդիկ Այւազեանը, Արմոնդ Բաղրամեանը, Մկրտիչ Աւետումեանը, Նորիկ Պօղոսեանը, Վազգէն Թահմազեանը, Վահէ Շահիջանեանը, Անուշ Էստիկը, Գեղարդ Մանսուրեանը, Նարինէ Տէր-Գրիգորեանը, Վազրիկ Վարդանեանը եւ Անդրէ Քալանթար Օհանեանը:

Շահինշահրում ընտրուել են Մառիթա Քեշիշեանը, Մելինէ Թորոսեանն ու Վիոլետ Յարութիւնեանը, Փերիոյ շրջանից՝ Զանի Նազարեանը, իսկ Շիրազում համայնքի ժողովուրդը միաձայնութեամբ իր ձայնը տուել է միակ թեկնածու՝ Հերմոնդ Յարութիւնեանին:

ԱՄԱՆՈՐԵԱՅ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ՝ ՆՈՐ ՋՈՒՂԱՅՈՒՄ

2017 թւականի յունուարի 1-ի առաջին պահերին՝ ժամը 00:50-ին, Ս. Ամենափրկչեան վանքի «Ս. Յովսէփ Արեմաթացի» եկեղեցում, հաւատաւոր հայորդիների ներկայութեամբ, կաթողիկոսական փոխանորդ գերպ. Տ. Սիփան Ծ. վրդ. Քէչէճեանի նախագահութեամբ եւ Շահինշահրի հայ համայնքի հոգեւոր տեսուչ գերպ. Տ. Անանիա Ծ. վրդ. Գուճանեանի, հոգեւորականաց ու դպրաց դասերի մասնակցութեամբ, Գոհաբանական աղօթք մատուցեց Ամանորի առթիւ:

Արարողութեան ընթացքում Ս. Սեղանի վրայ վառուող մոմից լոյս իջեցուց եւ դրանով վառեցին ներկայ հաւատացեալներին բաժանուած մոմերը՝ լուսաւորելով եկեղեցու խորհրդաւոր տարածքը. ներկաները միասնաբար երգելով «Տէ՛ր, ողորմեա՛» հոգեզմայլ աղօթքը, մաղթեցին, որ ամբողջ նոր տարւայ ընթացքում խաղաղութիւնը ուղեկցի համայն աշխարհին:

Կաթողիկոսական փոխանորդ Հայր Սուրբը Գոհաբանական մաղթանքից յետոյ իր շնորհաւորանքի խօսքը փոխանցեց բարեպաշտ ժողովրդին, աշխարհին խաղաղութիւն ու անդորրութիւն եւ համայն մարդկու-

թեանը երջանկութիւն մաղթելով: Գերպ. Հայր Սուրբը գնահատեց ներկաներին, ովքեր իրենց Նոր տարին յաջողութեամբ պսակելու համար՝ Տիրոջ տուն գալով Աստծու օրհնութիւնն ու առաջնորդութիւնն են հայցել:

Արարողութիւնից յետոյ, վանքի բակում բազմահարիւր հայորդիների ներկայութեամբ, տօնական երաժշտութեան ներքոյ տեղի ունեցաւ հրավառութիւն եւ հիւրասիրութիւն, որի ընթացքում բոլորն առիթ ունեցան տօնը միմեանց շնորհաւորելու եւ բարեմաղթանքներ կատարելու:

***

Յունուարի 1-ի առաւօտեան ժամը 11:00-ին, Ամանորի առթիւ սուրբ եւ անմահ Պատարագ մատուցեց դարձեալ «Ս. Յովսէփ Արեմաթացի» եկեղեցում: Պատարագիչն էր թեմի կաթողիկոսական փոխանորդ գերպ. Տ. Սիփան Ծ. վրդ. Քէչէճեանը: Արարողութեանը ներկայ եղան նաեւ Շահինշահիր հայ համայնքի հոգեւոր տեսուչ գերպ. Տ. Անանիա Ծ. վրդ. Գուճանեանը, հոգեւորականց եւ դպրաց դասերը, հաւատաւոր հայորդիներ, իսկ Ս. Պատարագի երգեցողութիւնը կատարեց Ս. Ա. Վանքի «Կոմիտաս» երգչախումբը:

Գերպ. Հայր Սուրբը Ս. Պատարագի ընթացքում քարոզի պահին նշելով, որ տարին փոխուելով հաշուետուութիւն պէտք է կատարել թէ ինչ ենք թողնում անցեալում եւ ինչ ենք ծրագրում ապագայի համար, ասաց. «*Նոր տարւայ նախօրեակին կանգնած, փորձենք ոչ միայն դիտել մեր կեանքի անցեալն ու ընթացքը, այլեւ մանաւանդ մեր ճիգերով, անշեղ որոշումներով ու անյետադարձ կամքով ընտրել թէ ի՛նչ ենք մեռցնելու մեր մէջ հին տարւայ հետ ու ինչի՛ն ենք ծնունդ տալու Նոր տարւայ հետ։ Եթէ փափագում ենք լաւագոյն արդիւնքների հասնել, ուրեմն նախ մեր մէջ բռնկեցնենք ու վառ պահենք մեր հաւատքն ու յոյսը, ապա հին տարւայ հետ մեր մէջ սպանենք չարը, վատը, մոլութիւններն ու մեղքերը եւ նրանց փոխարէն նոր տարւայ հետ մեր մէջ յարութիւն տանք բարուն, լաւին, առաքինութիւններին ու բարեգործութեանը, որպէսզի սրբագրենք մեր անցեալը, նոր մարդ դառնանք եւ լուսաւոր կաղանդի դիմաւորութեամբ ընթանանք դէպի մարդկային տիպար կերպարը, այն գոհունակութեամբ թէ՝ մեռաւ մեր մէջ հին մարդը եւ նրա փոխարէն ծնունդ առաւ աստուածահաճոյ նոր մարդ*»։

Ս. Պատարագի ընթացքում տարւայ առաջին Ս. Հաղորդութիւնն ստացան հոգեւորականաց եւ դպրաց դասերն ու ներկայ հաւատացեալները, իսկ արարողութիւնից յետոյ, Ս. Ա. վանքի Ծաղկեայ դահլիճում պատարագիչ Հայր Սուրբն ընդունեց Ամանորեայ շնորհաւորանքներ, ուր «Կոմիտաս» երգչախումբն իր ամանորեայ շնորհաւորանքն ընթերցեց, ապա արտայայտուեց Սպահանի հայոց թեմի Թեմական խորհրդի ատենապետ Վրէժ Տէր-Մարտիրոսեանը՝ համառօտ հաշուետուութիւն ներկայացնելով անցնող տարւայ ընթացքում համայնքի ձեռքբերումների մասին:

Գերպ. Հայր Սուրբն իր շնորհաւորանքները փոխանցեց, բարի ու արդիւնաւոր գործունէութիւն ցանկացաւ ազգային, կրօնական, կրթական, մշակութային, հասարակական եւ բոլոր ասպարէզներում, իսկ համայնքի բոլոր անդամներին մաղթեց արեւշատութիւն եւ առողջութիւն:

ԱՄԱՆՈՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՆԴԵԱՆ ՏՕՆԵՐԻ ԱՌԹԻՒ ՍՊԱՀԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԱՅՐԵՐԻ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ Ս.Ա. ՎԱՆՔ

2016 թւականի դեկտեմբերի 22-ին, Սպահան քաղաքի երրորդ շրջանի Կրթադաստիարակչութեան տնօրէն պրն. Դաղիղը իր գործակիցներով այցելեց ազգային առաջնորդարան եւ Թեմի կաթողիկոսական փոխանորդին եւ հանդիպմանը ներկայ Թեմական ու Կրթական խորհուրդների անդամներին իր շնորհաւորանքները փոխանցեց Ամանորի եւ Ս. Ծննդեան տօնների առթիւ:



Շնորհաւորանքների կողքին, զրոյցի առարկայ դարձաւ նաեւ հայոց դպրոցներին առնչւող մի շարք հարցեր:

2017 թւականի յունուարի 7-ի առաւօտեան, Սպահան քաղաքի ընդհանուր եւ 5-րդ շրջանի քաղաքապետեր դկտր. Ջամալինեժադը եւ պրն. Ֆառհանգը, իրենց տեղակալներով ու օգնականներով այցելեցին Սպահանի հայոց թեմի կաթողիկոսական փոխանորդ Հայր Սուրբին եւ ազգային մարմինների պատասխանատուներին՝ փոխանցելու Ամանորի առթիւ իրենց շնորհաւորանքները: Պրն. Ջամալինեժադը, սովորութեան համաձայն, յուշանուէրներ յանձնեց հիւրընկալող պատուիրակութեան անդամներին:

Հանդիպման ընթացքում գերպ. Տ. Սիփան Ծ. վրդ. Քէչէճեանը յատուկ կերպով շնորհակալութիւն յայտնեց քաղաքապետերին Ամանորի եւ Ս. Ծննդեան տօնների առթիւ Ս. Ամենափրկչեան վանքի տարածքն ու արտաքին շրջապատը գեղեցկօրէն զարդարելու համար:

2017 թւականի յունուարի 8-ի առաւօտեան, Ամանորի եւ մեր Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի Ս. Ծննդեան եւ Աստուածայայտնութեան տօնների առթիւ շնորհաւորանքներ փոխանցելու նպատակով Ս. Ամենափրկչեան Վանք ներկայացաւ Սպահանի նահանգապետ դկտր. Ռասուլ Զառգառփուռը՝ ընկերակցութեամբ Իսլամական մշակոյթի եւ առաջնորդութեան Սպահանի գերատեսչութեան տնօրէն եւ Միաստուածեան կրօնների գրասենեակի պատասխանատու հոջ. դկտր. Հաբիբ-Ռեզա Առզանիի, Սպահան քաղաքի 5-րդ շրջանի քաղաքապետ պրն. Ֆառհանգի, նահանգի Բարեկեցութեան հիմնարկի գլխաւոր տնօրէն դկտր. Սաիդ Սադեղիի եւ մի շարք գործակիցների:

Ազգային իշխանութեան անունից շնորհակալական խօսք ասւեց պրն. նահանգապետին՝ ապահովական ուժերի գործակցութեամբ Կաղանդի օրերին առաջնորդարանի շրջափակի ապահովութեան ուղղութեամբ պարտն ու պատշաճը տնօրինելու համար:

2017 թւականի յունուարի 8-ի միջօրէին, շնորհաւորանքներ փոխանցելու նպատակով Ս. Ա. Վանք այցելեց «Մելլաթ» դրամատան Սպահան նահանգի մասնաճիւղերի ընդհանուր տնօրէն պրն. Հաթիմը, իր հետ ունենալով դրամատան երկու այլ պատասխանատուների եւ «Խաղանի» մասնաճիւղի տնօրէնին:

2017 թւականի յունուարի 9-ի առաւօտեան Ս. Ամենափրկչեան Վանք այցելեց Սպահան քաղաքի ոստիկանապետ գնդապետ Եառդուստին, իրեն ընկերակից ունենալով մի քանի օգնականներ ու 15-րդ ոստիկանա-

տան պետ գնդապետ Զաբաո-Զառէին, եւ տեսակցութիւն ունեցաւ Թեմի կաթողիկոսական փոխանորդի եւ ազգային մարմինների ներկայացուցիչների հետ՝ ամանորեայ շնորհաւորանքներ փոխանցելու նպատակով:

Հիւրընկալ պատիւրակութիւնը բարձր գնահատեց ոստիկանութեան ցուցաբերած համագործակցութիւնն ու կարգադրութիւնները՝ Կաղանդի եւ Ամանորեայ տօներին Ազգային առաջնորդարանի տարածքի ապահովութիւնն ու խաղաղութիւնը կատարեալ կերպով պահպանելու համար:

2017 թւականի յունուարի 9-ի միջօրէին Ազգային առաջնորդարանը հիւրընկալեց Սպահան նահանգի Պետական գրանցումների հաստատութեան տնօրէնին եւ նրա օգնականներին, ովքեր Ամանորի առթիւ ազգային իշխանութեան պատիւրակութեան անդամներին իրենց շնորհաւորանքները փոխանցելուց բացի ընդհանուր տեղեկութիւններ տուեցին իրենց ղեկավարած հիմնարկի գործունէութեան մասին եւ պատրաստակամութիւն յայտնեցին հայ համայնքին առանձին սպասարկութիւն մատակարարելու նպատակով յատուկ գրասենեակ բանալ Նոր Ջուղայի տարածքում:

Պետական գրանցումների գրասենեակը Ազգային առաջնորդարանին յանձնեց Իրան-Իրաք պարտադրրեալ պատերազմի ընթացքում Թեմի հայ նահատակներից երկուսի համար պատրաստած խորհրդանշական վկայագրեր՝ նրանց ընտանիքներին փոխանցելու համար, նաեւ այն հայի փաստաթղթի լուսապատճէնը, ով Սպահանում առաջին ինքնաթուղթ ստացողն է եղել:

Յաջորդող օրերում եւս Ամանորեայ շնորհաւորանքներ փոխանցելու նպատակով Ս.Ա. Վանք այցելերին եւ գերպ. Տ. Սիփան Ծ. վրդ. Քէչէճեանի եւ ազգային իշխանութեան պատասխանատուներին հանդիպեցին Սպահանի «Մելլի» դրամատան ընդհանուր եւ շրջանի մասնափիւղի տնօրէններն ու ենթակայ պատասխանատուները, Սպահանի Բարեկեցութեան գերատեսչութիւնը, Սպահանի «Քոմիթէյէ Էմդադ Էմամ Խոմէյնի» գերատեսչութիւնը, Սպահան նահանգի Ղահջաւառեստան քաղաքի ուրբաթօրեայ աղօթապետը, Սպահանի «Թեջառաթ» դրամատան գլխաւոր տնօրէն եւ մասնաճիւղերի պատասխանատուները:

Վերոյիշեալ բոլոր հանդիպումների ընթացքում ազգային առաջնորդարանի կողմից ամանորեայ նուէրներ յանձնուեցին հիւրերին:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ՍՊԱՀԱՆԻ ՀՐՇԷՋԻ ԵՒ ԱՆՎՏԱՆԳՈՒԹԵԱՆ ԾԱՌԱՅՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԿԱԶՄԻ ՀԵՏ

Շորեքշաբթի՝ 2017 թւականի յունուարի 25-ի միջօրէին, Ազգային առաջնորդարանի կողմից յատուկ պատուիրակութիւն, որին մաս էին կազմում արժն. Տ. Վարդան քհնյ. Աղաբաբայեանը, պրնյք. Վրէժ Տէր-Մարտիրոսեանը, Գառնիկ Բաղդասարեանը, Սարօ Դիլանչեանը եւ Արթին Մուրադեանը, այցելեցին Սպահանի Հրշէջի եւ անվտանգութեան ծառայութիւնների կազմակերպութեան տնօրէն դկտր. Բեհզադ Բոզորգզադին:

Հանդիպման նպատակն էր Թեհրանում հրդեհի ճարագ դարձած «Փլասքօ» շէնքի դէպքի ընթացքում զոհուած հրշէջների համար ցաւակցութիւն փոխանցել կազմակերպութեան գործակիցներին:

Առաջնորդարանի պատուիրակութիւնը պատւով եւ մեծ սիրով ընդունուեց եւ հիւրընկալուեց տնօրէնի միջոցով: Ցաւակցութիւններն ընդունելուց եւ ծաղկեպսակն ստանալուց յետոյ, պրն. Բոզորգզադը համառօտ տեղեկութիւններ փոխանցեց իր ղեկավարած կազմակերպութեան գործունէութեան մասին եւ նշեց, որ Թեհրանում տեղի ունեցած ցաւալի դէպքը, անշուշտ ոչ այդ չափ մեծ ծաւալով, սակայն հրշէջների ամենօրեայ կեանքն ու աշխատանքն է. հրշէջների յանձն առած վտանգալից եւ ծանր պարտականութիւնը զուգորդուած է նման զոհողութիւններով եւ արժանի է, որ ոչ միայն նման ցաւալի առիթներով յիշել եւ մեծարել նրանց:

Ընթացքում նաեւ զրոյցի առարկայ դարձաւ Ս. Ամենափրկչեան Վանքի տարածքի հրշէջային յարմարութիւնների վերստուգման եւ յարկ եղած պարագային առաւել կարգաւորման խնդիրը, որի համար կազմակերպութիւնը ապագայում մասնագէտներ է առաքելու Առաջնորդարան:

«ՄԻԱՍՏԻԱԾԵԱՆ ԿՐՕՆՆԵՐ-ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹԻՒՆ» ԽՈՐԱԳՐՈՎ ՄԻՕՐԵԱՅ ԿԱՐԱՒԱՆ ՄԻԱՍՏԻԱԾԵԱՆ ԿՐՕՆՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԵԱՄԲ

Շորեքշաբթի՝ 2017 թւականի փետրուարի 8-ի առաւօտեան ժամը 8:00-ից մինչեւ յետմիջօրէի ժամը 4:00-ը տեւող կարաւան էր կազմակերպւել Միաստուածեան կրօնների գրասենեակի միջոցով:

Կարաւանին, որի նպատակներից մէկն էր Իրանի իսլամական յեղափոխութեան Այգաբացի տասնօրեակի ընթացքում միաստուածեան կրօնների հետեւորդների միասնականութիւնն ու համագոյակցութիւնն առաւել ամրապնդել, մասնակցում էին քրիստոնեայ (ուղղափառ եւ կաթոլիկ), իսլամ, զրադաշտ, հրեայ, Յովհաննէս Մկրտչի կրօնների հետեւորդներ, նաեւ յատուկ ներկայութիւն ունեցան Իսլամական մշակոյթի եւ առաջնորդութեան նախարարութեան խորհրդականը, նոյն նախարարութեան Սպահանի գերատեսչութեան տնօրէնը եւ շրջանների քաղաքապետերը:

Հայ համայնքի անունից սոյն ծրագրին մասնակցեցին ազգային իշխանութեան եւ միութիւնների ներկայացուցիչներից կազմւած ինը հոգանոց պատուիրակութիւն:

Ծրագիրն սկիզբ առաւ Սպահանի նահատակների շիրիմների վրայ ծաղկեմատոյց զետեղելով, ապա այցելութիւն տրուեց Սպահանի հրշէջ-ծառայութեան կենտրոններից մէկին, որտեղ յարգանքի տուրք մատուցուեց նիւրեալ այդ անձանց խմբին ու յատկապէս վերջերս Թեհրանի «Փլասքո»-ի շէնքի աղէտալի դէպքում զոհուած հրշէջների յիշատակին, յաջորդիւ կարաւանը կենտրոնանալով Հայոց ազգային գերեզմանատան մէջ՝ ներկայ եղաւ Իրան-Իրաք պարտադրեալ պատերազմի ընթացքում նահատակուած հայ զինուորների շիրիմների մօտ գերպ. Տ. Անանիա Ծ. վրդ. Գուճանեանի ձեռամբ եւ քահանայից ու դպրաց դասերի մասնակցութեամբ մատուցուող Հոգեհանգստեան արարողութեանը, որտեղ Իրանի իսլամական խորհրդարանում Սպահանի եւ հարաւային իրանահայութեան պատգամաւոր պրն. Ժորժիկ Աբրահամեանը նաեւ պատշաճ խօսք արտասանեց:

Այնուհետեւ խումբը հերթաբար այցելեց Ս. Ամենափրկչեան վանք, զրադաշտների մեհեան, հրեաների սինոգոգ եւ իսլամների մզկիթ: Այցելած բոլոր վայրերում ընդունելութեան եւ կոկիկ աղօթական ու բացատրական ծրագրեր իրականացան:

Վերջաւորութեանը, կարաւանը նահանգապետարանի ընդունարանում հանդիպեց Սպահանի նահանգապետ Ռասուլ Զառգառփուռին, որտեղ վայելեց նահանգապետարանի կողմից պատրաստուած ճաշը, ապա ունկնդրեց իւրաքանչիւր կրօնի պատուիրակութեան ներկայացուցչի խօսքը, Իսլամական մշակոյթի եւ առաջնորդութեան նախարարի պատգամը, որն ընթերցուեց նրա խորհրդականի միջոցով, եւ լսեց նահանգապետի յաւուր պատշաճի արտայայտութիւնները:

Նահանգապետարանին կից, Իրանի իսլամական յեղափոխութեան հոլովոյթին եւ նախորդող տարիներին վերաբերող ցուցահանդէսի այցելութիւնն եղաւ սոյն ծրագրի փակումը:

ՍՈՒՐԲ ԾՆՆԴԵԱՆ ԵՒ ԱՍՏՒԱԾԱՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ ՏՕՆԵՐԻ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ՝ ՆՈՐ ՋՈՒՂԱՅՈՒՄ

Հինգշաբթի՝ յունարի 5-ի երեկոյեան ժամը 5-ին, թեմի հայոց եկեղեցիներում զանգերի ղօղանջով սկսուեց Ս. Ծննդեան եւ Աստուածայայտնութեան տօների նախատօնակի՝ Ճրագալոյցի Ս. Պատարագի արարողութիւնը:

Այս հանդիսաւոր առիթի նշման ուղղութեամբ Նոր Ջուղայի Ս. Յովհաննու, Ս. Ստեփանոս, Ս. Ներսէս եւ Ս. Աստուածածին եկեղեցիներում մատուցուեց Ս. Պատարագ, ուր պատարագիչ հայրերը եկեղեցական արարողութեան ընդմիջից աւետեցին մեր Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի Ս. Ծննդեան լուրը:

Ս. Յովհաննու եկեղեցու Ս. Պատարագին նախագահեց Սպահանի հայոց թեմի Կաթողիկոսական փոխանորդ գերպ. Տ. Սիփան Ծ. վրդ. Քէչէճեանը: Պատարագը մատուցեց արժ. Տ. Վազգէն քհնյ. Քէօշկէրեանի, իսկ երգեցողութիւնը կատարուեց Ս. Ամենափրկիչ վանքի «Կոմիտաս» երգչախմբի միջոցով:

Յընթացս Ս. եւ անմահ Պատարագի, Հայր Սուրբն ընթերցեց Ս. Ծննդեան տօնի առիթով Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Վեհափառ Հայրապետի «Բեթղեհէմի ճամբով դառնանք Աստծուն» խորագրով պատգամը, ուր շնորհազարդ Հայրապետն կարեւորութեամբ ընդգծելով ներկայ աշխարհում առկայ մի շարք երեւոյթներ, որոնք մեզ շեղում ու հեռացնում են ճշմարիտ լոյսի աղբիւր, աստուածայայտնութեան սրբավայր եւ աստուածակենտրոն արժէքների գանձարան՝ Բեթղեհէմից, շեշտել էր. «*Զգոյշ... առաջին քրիստոնեայ ժողովուրդ։ Դարեր շարունակ Բեթղեհէմի խորհրդով քո կեանքը շաղախած, Բեթղեհէմի պատգամը կեանքիդ իմաստը, ճանապարհն ու նպատակը դարձրած ժողովուրդ հայոց, ներկայ փոթորկալից աշխարհում դարձիր Բեթղեհէմին եւ նրանից ճառագայթող լոյսով լուսաւորիր, հաւատքով թրծիր ու յոյսով շաղախիր կեանքդ ու գործդ*»։

Վերջում հաւատացեալները լսելով Քրիստոսի Ս. Ծնունդը հռչակող շարականի «Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ» աւետաբեր բառերը՝ շտապեցին Փրկչի ծննդեան տօնը նշելու իրենց հարազատների հետ:

Յաջորդ օրը՝ ուրբաթ, յունուարի 6-ի առաւօտեան ժամը 10:30-ին, Ս. Ծննդեան տօնի Պատարագը մատուցեց Նոր Ջուղայի Ս. Բեթղեհէմ, Ս. Յովհաննու, Ս. Մինաս եւ Ս. Ստեփանոս եկեղեցիներում: Ս. Բեթղեհէմ եկեղեցու Պատարագը մատուցեց թեմի Կաթողիկոսական փոխանորդ Հայր Սուրբի ձեռամբ, որին սպասարկում էր արժ. Տ. Խաչատուր քհնյ. Զարգարեանը: Երգեցողութիւնը կատարուեց Ս. Ամենափրկիչ վանքի «Կոմիտաս» երգչախմբի միջոցով:

Քարոզի պահին, բազմաթիւ հաւատաւոր հայորդիներին իր հայրական խօսքը փոխանցեց պատարագիչ Հայր Սուրբը: Նա իր խօսքում անդրադառնալով Փրկչի ծնունդին եւ տօնի խորհրդին՝ ասաց. «*Այսօր Յիսուս Քրիստոսի Ծննդեան տօնն է, ուստի եկէք մեր անձերը ինքնաքննութեան հայելիների դիմաց կանգնեցնենք եւ ուշադրութեամբ դիտենք ու գննենք մեր ներաշխարհը։ Փորձենք Կաղանդի կամ Նոր տարւայ առթիւ մենք եւս նորոգւել, կատարելով հետեւեալ պարտականութիւնները, որպէս քրիստոնեաներ։ Նախ ողորմութիւն փորձենք բաշխել մեր չորս դին, որպէսզի մեր եղբայրներին եւ քոյրերին տալիք մաքուր ու բարի սրտից բխած մեր նուէրները հասնեն ծնեալ Փրկչին։ Երկրորդ, փորձենք մաքրել մեր անձերն ու մեր ներաշխարհը ամէն տեսակի արատներից ու մեղքերից։ Երրորդ, փորձենք ապրել մի աստուածահաճոյ կեանք՝ լեցուն բարեգործութիւններով։ Իսկ վերջինը, որ կարեւորագոյնն է, զօրացնենք մեր հաւատքը, որպէսզի հաւատքի միջոցով կարողանանք անդամագրւել եւ հարազատները դառնալ Աբրահամով սկսած, Իսահակով բաժանուած եւ Դաւիթով զօրացած մեր Տիրոջ ու Փրկչի՝ Յիսուս Քրիստոսի շառաւիղին, եւ արժանանաք Երկնքի Արքայութեանն ու Ամենասուրբ Երրորդութեան օրհնութեանն ու շնորհքներին*»։

Հայր Սուրբի Ծննդեան տօնի պատգամն ընթերցուեց նաեւ միւս եկեղեցիներում՝ պատարագիչ քահանայ հայրերի միջոցով:

Ս. Պատարագից յետոյ տեղի ունեցաւ Զրօրինէքի հոգեպարար արարողութիւնը, որտեղ աղօթքների եւ շարականների հնչիւնների ներքոյ գերպ. Հայր Սուրբի ձեռամբ Ս. Միւռոնի հեղումով օրհնուեց եւ սրբագործուեց ջուրը: Միւռոնալից ջուրը բաժանուեց հաւատացեալներին, ովքեր որպէս աստուածային պարգեւ այն ըմպեցին եւ տուն տարան՝ Ս. Հոգու շնորհներով ողողելու իրենց բնակարանները:

Նոյն օրը, կէսօրից յետոյ, Զրօրինէքի արարողութիւն տեղի ունեցաւ նաեւ Նոր Ջուղայի Ս. Սարգիս եւ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցիներում, իսկ թեմի Կաթողիկոսական փոխանորդ գերպ. Տ. Սիփան Ծ. վրդ. Քէչէճեանի նախագահութեամբ եւ Շահինշահրի հայ համայնքի հոգեւոր տեսուչ գերպ. Տ. Անանիա Ծ. վրդ. Գուճանեանի ու քահանայից ու դպրաց դասերի մասնակցութեամբ, երեկոյեան ժամը 5:30-ին, Զրօրինէքի կարգ կատարուեց առաջնորդանիստ Ս. Ամենափրկիչ վանքի «Ս. Յովսէփ Արեմաթացի» եկեղեցում, որից յետոյ, առաջնորդարանի Ծաղկեայ դահլիճում Կաթողիկոսական փոխանորդ Հայր Սուրբն ընդունեց Ս. Ծննդեան տօնի առթիւ շնորհաւորանքները:

Բոլոր արարողութիւններին ներկայ էին հոծ թւով հաւատացեալներ:

«ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ՏԱՐԻԱՅ» ԱՌԹԻՒ Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԳԻՐՆ ԸՆԹԵՐՑԻԵՑ Ս. ՅՈՎՀԱՆՆԷՍ ԿԱՐԱՊԵՏԻՆ ՄԱՏՈՒՑԻՈՂ Ս. ՊԱՏԱՐԱԳԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Շաբաթ՝ յունուարի 14-ի առաւօտեան, Ս. Յովհաննէս Կարապետի ծննդեան տօնի առթիւ, հանդիսաւոր սուրբ Պատարագ մատուցեց Սպահանի հայոց թեմի Կաթողիկոսական փոխանորդ գերպ. Տ. Սիփան Ծ. վրդ. Քէչէճեանի ձեռամբ, Նոր Ջուղայի «Ս. Յովհաննու» եկեղեցում, ուր նշուեց նաեւ նոյն եկեղեցու անուանակոչութեան տօնը: Արարողութեանը մասնակցում էին թեմի քահանայից ու դպրաց դասերը. երգեցողութեամբ հանդէս եկաւ Ս. Ամենափրկչեան վանքի «Կոմիտաս» երգչախումբը:

Հոգեպարար արարողութեան ընթացքում պատարագիչ Հայր Սուրբի միջոցով ընթերցուեց Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Վեհափառի հայրապետական գիրը, որի միջոցով 2017 թուականը հռչակուել էր Վերանորոգման տարի: Սոյն հռչակագրում շեշտուած էր, թէ Աստուածաշնչի եւ աշխարհի բոլոր կրօնների ուսուցման համաձայն՝ կեանքն իր բոլոր տարրերով ու տարածքներով կարիք ունի մնայուն վերանորոգման, այլապէս պիտի կորցնի իր ներքին կենսունակութիւնը: Շնորհազարդ Վեհափառ Հայրապետը նշելով նաեւ, որ վերանորոգումը երաշխիք է զարգացման, հզօրացման ու յաւերժացման, մի շարք մատնանշումներ էր կատարել վերանորոգման մասին՝ ընդգծելով յատկապէս նրա առանցքային կարեւորութիւնը մեր անհատական եւ հաւաքական կեանքերում:

Սոյն գրութեան աւարտին 2017 թուականը մեր կեանքի վերանորոգման առաջին ու վճռական հանգրուանը նկատելու հեռանկարով կոչ էր արուել.

- Հոգեւոր մշակներին՝ եկեղեցու առաքելութեան ճամբով շեշտելու կենսական անհրաժեշտութիւնը հոգեւոր ու բարոյական վերանորոգման, միաժամանակ՝ մասնակից դառնալով նոյն աշխատանքին նպաստող բոլոր նախաձեռնութիւններին:

- Մտաւորականներին՝ իրենց խօսքով ու գրչով արծարծ պահելու վերանորոգման առանցքային կարեւորութիւնը մեր ազգային կեանքում:

- Համայնքային, կուսակցական թէ քաղաքական ղեկավարներին՝ իրենց ստանձնած պատասխանատուութեան ծիրում առաջնահերթութիւն տալու մեր կառոյցները վերանորոգման առաջնորդող ծրագրերին ու աշխատանքներին:

- Ազգի իւրաքանչիւր զաւակին՝ յիշեցնելով, որպէս հարազատ անդամը մեր Մեծ Ընտանիքի, թէ՝ կոչուած է իր ապրած կեանքի որակով ու հարուստ գործերով կարեւոր նպաստ բերելու մեր եկեղեցու, ազգի ու հայրենիքի առաւել կազմակերպմանը, ծաղկմանն ու վերանորոգմանը:

Հայրապետական գրի ընթերցումից յետոյ ներկաները Ս. Հաղորդութիւն ստացան պատարագիչ Հայր Սուրբի միջոցով, ապա նրա գլխաւորութեամբ եւ հոգեւորականաց դասի մասնակցութեամբ, Ս. Յովհաննէս Մկրտչի աջով կատարուեց Ջրօրհնէքի արարողութիւնը եւ օրհնուած ջուրը բաժանուեց ներկաներին:

Հոգեւոր կարգից յետոյ բոլորը համախմբուելով եկեղեցու բակում ականատեսը եղան երգերով ու խօսքերով յագեցած օրուայ առթիւ միջոցառմանը, որն իրականացուել էր նոյն եկեղեցու ծխատէր քահանայ հայր արժ. Տ. Վազգէն քհնյ. Քէօշկէրեանի եւ երէցփոխուհի ու Տիկնանց յանձնախմբի անդամուհի Մառիթա Կարապետեանի համատեղ ջանքերի շնորհիւ:

Միջոցառման սկզբնական բաժնում ողջոյնի խօսքով հանդէս եկաւ ծրագրի հանդիսավար Մառիթա Կարապետեանը, ով հակիրճ տեղեկութիւններ փոխանցեց նաեւ «Ս. Յովհաննու» եկեղեցու պատմական անցեալի մասին: Յաջորդիւ երգերով ելոյթ ունեցան Ռի-

թա Մինասեանը, Ռիմա Մարկոսեանն ու Համաս Մարգարեանը:

Ծրագրի աւարտին արտայայտուեց արժ. Տ. Վազգէն քհնյ. Քէօշկէրեանը, ով ողջունելով Վեհափառ Հայրապետի մտայղացումը՝ 2017 թւականը Վերանորոգման տարի հռչակելու կապակցութեամբ, շնորհաւորանքի խօսք ասաց տօնի առթիւ: Նա դրւատելով հոգեւորականների նկատմամբ թեմիս ժողովրդի ցուցաբերած յարգալից վերաբերմունքը՝ իր սրտի բերկրանքն արտայայտեց առ այն, որ օրւայ հանդիսաւոր Պատարագը մատուցւեց Կաթողիկոսական փոխանորդ Հայր Սուրբի ձեռամբ: Քահանայ հայրն գնահատեց նաեւ թեմի քահանայից ու դպրաց դասերին, «Ս. Յովհաննու» եկեղեցու երէցփոխներին ու Տիկնանց յանձնախմբին: Միջոցառման ընթացքում տեղի ունեցաւ համեստ հիւրասիրութիւն:

Հոգեպարար արարողութեանը եւ տօնական ծրագրին ներկայ էին թեմի Կրօնական խորհրդի ու Ն.Ջ. Հայոց Առաքելական Եկեղեցեաց վարչութեան ներկայացուցիչները եւ հոծ թւով ժողովուրդ:

ԵՐԿՕՐԵԱՅ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆՆԵՐՈՎ ՆՈՐ ՋՈՒՂԱՅՈՒՄ ՆՇԻԵՑԻՆ Ս. ՍԱՐԳԻՍ ԶՕՐԱՎԱՐԻ ԵՒ ՀԱՄԱՆԱՆՈՒՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՆԻԱՆԱԿՈՉՈՒԹԵԱՆ ՏՕՆԵՐԸ

Ուրբաթ եւ շաբաթ՝ փետրուարի 10-ին եւ 11-ին, հոգեզմայլ արարողութիւնների մատուցմամբ ու հոծ թւով հաւատացեալ ժողովրդի ներկայութեամբ, Նոր Ջուղայի Ս. Սարգիս եկեղեցում, նշւեցին Ս. Սարգիս զօրավարի եւ համանուն եկեղեցու անւանակոչութեան տօները:

Հանդիսաւոր արարողութիւններն իրականացւեցին Շահինշահիր հայ համայնքի հոգեւոր տեսուչ գերպ. Տ. Անանիա Ծ. վրդ. Գուճանեանի նախագահութեամբ եւ թեմի հոգեւորականաց ու դպրաց դասերի մասնակցութեամբ:

Հոգեւոր արարողութիւնների շարանն սկիզբ առաւ ուրբաթ՝ յետմիջօրէի ժամը 3:00-ին, եկեղեցու շրջափակում՝ աղօրհնէքի եւ ոչխարների զենման ծիսակարգերի կատարմամբ:

Նոյն օրը երեկոյեան ժամը 6:00-ին, տեղի ունեցաւ Հսկումի արարողութիւն, ուր գերպ. Հայր Սուրբը ներկաներին փոխանցեց իր պատգամը:

Նա սկզբում ներկայացրեց Ս. Սարգիս զօրավարի կեանքն ու կատարած ծառայութիւնները, ապա մէջբերեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Վեհափառ Հայրապետի խօսքը, որտեղ շնորհազարդ Հայրապետը նշել էր. «*Հայաստանեայց Առաքելական եկեղեցին ունի երկու երես՝ ազգային եւ հոգեւոր, որոնք անբաժանելի են: Ս. Սարգիսը զօրավար ազգային էր, իսկ որպէս նահատակ՝ սուրբ. նա որպէս հաւատի ռահվիրայ իր կեանքը եւ գլուխը տւեց թշնամուն, որպէսզի պահի իր եկեղեցու մեծ գլուխը՝ Յիսուս Քրիստոսին, հաւատը եւ եկեղեցին*»:

Այնուհետեւ Հայր Սուրբը դիմելով եկեղեցում ներկայ Իրանի Իսլ. Հանրապետութեան զինւած ուժերում ծառայող թեմի զաւակներին, ովքեր հրաւիրւել էին մասնակցելու Կրօնական խորհրդի նախաձեռնութեամբ սոյն տօնի առթիւ կազմակերպւած զինւորների օրհնութեան կարգին, ասաց «*Դուք այստեղ հրաւիրւել էք որպէս Ս. Սարգսի ազգային երեսի խորհրդանիշ: Եթէ այսօր դուք ծառայում էք ազգին, երկրին եւ հողին, մենք էլ ձեր կողքին, ձեզանից ուժ վերցնելով՝ ծառայում ենք Աստծուն, եկեղեցուն եւ ժողովրդին*»:

Այնուհետեւ երիտասարդ զինւորները ծնկի եկան խորանի առջեւ՝ օրհնութիւն ստանալու համար, որից յետոյ բոլորը համախմբւեցին եկեղեցու բակում, ուր յանուն թեմի ազգային իշխանութեան ողջոյնի խօսք ասաց Կրօնական խորհրդի ատենապետ Վարուժ Մով-

սիսեանը: Նա նշեց, թէ օրինակելով Հայաստանում 2014 թւականից իրականացուող «Մենք մեր զինուորի կողքին ենք» բարեգործական ծրագրից, Կրօնական խորհուրդը նոյնպէս որոշեց կազմակերպել նման արարողութիւն:

Շարունակութեան մէջ արտայայտուեց ազգային-հասարակական գործիչ Թաթուլ Օհանեանը, ով իր խորին շնորհակալութիւնը յայտնելով խորհրդին՝ այս գեղեցիկ մտայղացման համար, ասաց. «*Հայրենիքը միայն սահմանափակ սահմաններով հող ու ջուր չէ։ Հայրենիքն իր ժողովրդով է հայրենիք։ Հայրենիքն այն ժողովրդով է հպարտ, որ ունի հաւատամք, ունի մշակոյթ, լեզու, վարք ու բարք, աւանդութիւն եւ սովորութիւն։ Ազգերը ապրում, գոյատեւում եւ ստեղծագործում են իրենց հայրենիքներում։ Հետեւաբար հայրենիքը, հողն ու ջուրը եւ ժողովուրդը համարւում են սուրբ, իսկ այս սրբութեան պահողները մեր զինուորներն են։ Մեր զինուորներն իրենց անանձնական մօտեցումով, իրենց բարի փորձերով պահում են մեր սահմանները եւ մեզ*»: Պրն. Օհանեանն իր խօսքի աւարտին բոլոր զինուորներին մաղթեց անվտանգ ու բարի ծառայութիւն:

Վերջում Հայր Սուրբի եւ ազգային մարմինների ներկայացուցիչների միջոցով Կրօնական խորհրդի կողմից նուէրներ շնորհուեցին դերզօրավար Արտիկ Մելիքեանին, ներկայ զինուորներին, իսկ բացակայութեան պարագային՝ նրանց ծնողներին:

Շաբաթ՝ փետրուարի 11-ի առաւօտեան, սոյն տօնի առթիւ, ձեռամբ գերպ. Տ. Անանիա Ծ. վրդ. Գուճանեանի մատուցուեց սուրբ եւ անմահ Պատարագ: Երգեցողութիւնը կատարեց Ս.Ա. Վանքի «Կոմիտաս» երգչախումբը՝ ղեկավարութեամբ Արմէն Ամիրխանեանի:

Պատարագին ներկայ էին նաեւ հայոց ազգ. «Արմէն» երկսեռ տարրական կրթահամալիրի 6-րդ դասարանի աշակերտ-ուհիները՝ իրենց ուսուցիչների եւ ծնողական խորհրդի ընկերակցութեամբ:

Ընթացքում յաւուր պատշաճի քարոզեց գերպ. Հայր Սուրբը: Նա նշելով, որ մեր եկեղեցին հարուստ է իր սրբերով, այսպէս աւելացրեց. «*Այսօր աշխարհի չարիքների պատճառով շատ մարդիկ են նահատակւում, սակայն տարբերութիւն գոյութիւն ունի մարդկային եւ սրբերի նահատակութեան միջեւ։ Մենք մարդկային նահատակների համար խնդրում ենք երկնքի արքայութիւնը, սակայն սրբերից խնդրում ենք Աստծու մօտ մեզ համար բարեխօսութիւնը... Ս. Սարգիսն այսօր մեզանից իւրաքանչիւրին պատգամում է սիրել միմեանց՝ առանց որեւէ ակնկալիքի, հաւատալ, գիջել ու նահատակւել*»:

Այնուհետեւ Հայր Սուրբը շնորհաւորանքի խօսք ասաց Ս. Սարգիս զօրավարի եւ համանուն եկեղեցու անուանակոչութեան տօների առթիւ, իսկ արարողութիւնների կազմակերպման եւ իրականացման համար գնահատեց հոգեւորականաց ու դպրաց դասերին, Կրօնական խորհրդին, Նոր Ջուղայի Հայոց Առաքելական եկեղեցեաց վարչութեանը, եկեղեցու տիկնանց յանձնախմբին, հարիսայի պատրաստման յանձնախմբին, երգչախմբին եւ յատկապէս հաւատացեալ ժողովրդին ու տօնի առթիւ մատաղ կամ նիւթական նուէրներով նուիրատուութիւն կատարած անհատներին:

Վերջում Ս. Սարգիս զօրավարի աջով կատարուեց Զրօրհնէքի արարողութիւն, ապա բոլորը համախմբուեցին եկեղեցու բակում, ուր օրհնուեց նաեւ պատրաստուած հարիսան եւ բաժանուեց ժողովրդին:

ՏԵԱՌՆԸՆԴԱՌԱՋԻ ՆԱԽԱՏՕՆԱԿԸ ՆՇԻԵՑ ՆՈՐ ՋՈՒՂԱՅՈՒՄ

Երկուշաբթի՝ փետրուարի 13-ի երեկոյեան, Նոր Ջուղայի Ս. Մինաս, Ս. Գրիգոր Լուսաւորիչ, Ս. Ստեփանոս եւ Ս. Յովհաննու եկեղեցիներում կատարուեց Տեառնընդառաջի նախատօնակի արարողութիւնը:

Իւրաքանչիւր եկեղեցում յաւուր պատշաճի քարոզեց ծխատէր քահանայ հայրը՝ անդրադառնալով Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի տաճար ընծայմանն ու տօնի խորհրդին, ապա եկեղեցական կարգի աւարտին կատարուեց մանուկների տաճար ընծայման արարողութիւնը, իսկ եկեղեցու բակում՝ թաղի քահանայ հօր եւ նորապսակների միջոցով, բոցավառուեց աւանդական խարոյկը:

Նոյն օրը երեկոյեան, նախաձեռնութեամբ Սպահանի հայոց թեմի Կրօնական խորհրդի եւ կազմակերպութեամբ Նոր Ջուղայի Հայոց Առաքելական Եկեղեցեաց վարչութեան, Նոր Ջուղայի Հայ Մ.Մ. «Արարատ» միութեան շրջափակում իրականացուեցին աւանդոյթ դարձած միջոցառումները, ուր սկզբում խարոյկը բոցավառուեց Շահինշահրի հայ համայնքի հոգեւոր տեսուչ գերպ. Տ. Անանիա Ծ. վրդ. Գուճանեանի եւ նորապսակ զոյգերի միջոցով, ապա միութեան սրահում գերպ. Հայր Սուրբը եւ ազգային մարմինների ու հոգեւորականաց դասի ներկայացուցիչները հանդիպում ունեցան Նոր Ջուղայի եւ Շահինշահրի համայնքների նորապսակների, նորածինների եւ նրանց ծնողների հետ:

Հիւրերին բարի գալստեան խօսք յայտնեց հանդիսավար Մանիա Ղուկասեանը:

Այնուհետեւ ողջոյնի խօսքով ու բարեմաղթանքներով հանդէս եկան Նոր Ջուղայի Հայոց Առաքելական Եկեղեցեաց վարչութեան փոխ-ատենապետ Հենրիկ Յակոբեանն ու Կրօնական խորհրդի ատենապետ Վարուժ Մովսիսեանը:

Աւանդոյթի համաձայն նորածիններն ու իրենց ծնողները, ինչու չէ նաեւ նորապսակ զոյգերը առանձնաբար լուսանկարուեցին Հայր Սուրբի եւ ազգայինների հետ, ապա իւրաքանչիւր խումբ հատեց իր համար նախատեսուած տորթը:

Շարունակութեան մէջ գեղեցիկ ու յուզիչ արտայայտութիւններով ելոյթ ունեցան նորապսակներից եւ նորածինների ծնողներից, որից յետոյ Հայր Սուրբի եւ

Պատգ. ժողովի Դիւանի, Թեմական ու Կրօնական խորհուրդների ատենապետեր՝ Վարուժ Մինասեանի, Վրէժ Տէր-Մարտիրոսեանի ու Վարուժ Մովսիսեանի եւ Նոր Ջուղայի Հայոց Առաքելական Եկեղեցեաց վարչութեան փոխ-ատենապետ Հենրիկ Յակոբեանի միջոցով նորածիններին նուիրեցին ոսկէ խաչեր, իսկ նորապսակներին՝ դրամական նուէրներ:

Վերջում գերպ. Հայր Սուրբը փոխանցեց իր օրհնանքը: Նա ողջունելով բոլորի ներկայութիւնը, իր ուրախութիւնը յայտնեց, առ այն, որ որպէս հարազատ եւ եղբայր շրջապատուած է նորակազմ հայ ընտանիքներով ու ընտանիքի սրբութեան արդիւնքը հանդիսացող հրաշք նորածիններով: Նա իր խօսքի շարունակութեան մէջ նշեց, թէ նորապսակները Տիրոջն ընդառաջ են գնում եւ Տէրը նրանց տունը լուսաւորում է՝ հրաշք բալիկներ շնորհելով:

Հայր Սուրբը գնահատեց ազգային մարմիններին, ի մասնաւորի Կրօնական խորհրդին եւ Ն.Ջ. Հայոց Առաքելական Եկեղեցեաց վարչութեանը՝ միջոցառումը կազմակերպելու համար, ապա գնահատեց նաեւ Տեառնընդառաջի տօնի առթիւ ձեւաւորուած գեղեցիկ աւանդոյթը, որտեղ ազգային մարմինների ներկայացուցիչները, նորապսակներն ու նորածինները որպէս մէկ ընտանիք հաւաքւում եւ վայելում են ընտանեկան մթնոլորտը:

ՍՐԲՈՑ ՂԵՒՈՆԴԵԱՆՑ ՔԱՀԱՆԱՅԻՑ ՏՕՆԻ ԱՌԹԻՒ Ս. ՊԱՏԱՐԱԳ՝ ՆՈՐ ՋՈՒՂԱՅՈՒՄ

Երեքշաբթի՝ փետրուարի 21-ին, սրբոց Ղեւոնդեանց քահանաների տօնին, սուրբ եւ անմահ Պատարագ մատուցեց Նոր Ջուղայի Ս. Յովհաննու Կարապետ եկեղեցում: Պատարագիչն էր Շահինշահրի հայ համայնքի հոգեւոր տեսուչ գերպ. Տ. Անանիա Ծ. վրդ. Գուճանեանը: Ս. Պատարագի երգեցողութիւնը կատարեց Ս. Ամենափրկչեան վանքի «Կոմիտաս» երգչախումբը: Ներկայ էին Սպահանի հայոց թեմի քահանայից ու դպրաց դասերը, ովքեր զգեստաւորուած մասնակցում էին արարողութեանը: Թափօրի պահին բոլոր հոգեւորականները վառ մոմեր բռնած դարձան հաւատացեալ ներկաների մէջ եւ օրհնութիւն փոխանցեցին նրանց:

Պատարագիչ Հայր Սուրբը, օրուայ առթիւ իր քարոզի ընթացքում, բնաբան ունենալով կորնթացիներին գրած Պօղոս առաքեալի առաջին նամակի՝ «*Պարծենալու բան չունեմ, երբ Աւետարանն եմ քարոզում, որովհետեւ պարտաւոր եմ այդ անել, եւ վա՜յ ինձ, եթէ չքարոզեմ*» (9.16) հատուածը անդրադարձաւ Ղեւոնդեանց քահանաների վարքին ու հաւատի պաշտպանութեան ճանապարհին նրանց զոհագործմանը եւ շեշտեց, որ նրանք այդ ամէնը արժանաւորութեամբ ի կատար ածեցին՝ աղօթքին նւիրուելով եւ դրանից հոգեւոր սնունդ ու զօրութիւն ստանալով: Գերպ. Հայր Սուրբը շնորհաւորելով քահանաներին իրենց տօնի առիթով, յորդորեց բոլոր ներկաներին՝ աշխարհական թէ հոգեւորական, միմեանց համար աղօթել եւ այդպիսով զօրանալ:

Ս. Պատարագի աւարտին հոգեհանգստեան արարողութիւն կատարուեց՝ ընդհանրապէս Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան եւ մասնաւորապէս Ս. Յովհաննու եկեղեցում ծառայած բոլոր ննջեցեալ հոգեւոր հայրերի հոգիների խաղաղութեան համար:

Արարողութիւնից յետոյ ներկայ հաւատացեալները Ս. Խորանի առջեւ կանգնած հոգեւորականաց դասին մօտենալով, իրենց շնորհաւորանքն ու բարեմաղթանքները փոխանցեցին նրանց:

Յաջորդիւ, եկեղեցու սրահում, Կրօնական խորհրդի եւ Նոր Ջուղայի Հայոց առաքելական եկեղեցեաց վարչութեան կազմակերպութեամբ տեղի ունեցաւ գեղարուեստական կոկիկ յայտագրով միջոցառում եւ հիւրասիրութիւն: Ծրագրի հաղորդավարութիւնը կատարեց եկեղեցու երէցփոխուհի Մառիթա Կարապետեանը: Հերթաբար ասմունքեցին եւ մեներգեցին՝ Հերմինէ Բաբայեանը, Քարմէն Եարիջանեանը, Ռիթա Մկրտչեանը եւ Սամսոն սրկ. Զարգարեանը: Շնորհաւորանքներ եւ խօսքեր փոխանցեցին՝ Ս. Յովհաննու եկեղեցու կանանց հոգեւոր լսարանի եւ «Շուշանիկ» երգչախմբի անունից՝ նոյն երգչախմբի ղեկավար Անուշիկ Յովհաննիսեանը, Եկեղեցեաց վարչութեան անունից՝ Լիդա Սիմոնեանը, Կրօնական խորհրդի կողմից՝ խորհրդի ատենապետ Վարուժ Մովսիսեանը:

Յանուն Հոգեւորականաց դասի շնորհակալական խօսք արտասանեց արժն. Տ. Մեսրոպ Աւ. քհնյ. Գալըստանեանը, իսկ ծրագրի եզրափակիչ բաժինն եղաւ գերպ. Տ. Անանիա Ծ. վրդ. Գուճանեանի խրատական եւ իմաստալից արտայայտութիւնները:

ՎԱՐԴԱՆԱՆՑ ՏՕՆԻ ԱՌԹԻՒ Ս. ՊԱՏԱՐԱԳ՝ ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ Ս. ԱՄԵՆԱՓՐԿԻՉ ՎԱՆՔՈՒՄ



Սրբոց Վարդանանց տօնի առթիւ, հինգշաբթի՝ փետրուարի 23-ի առաւօտեան, Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանքի «Ս. Յովսէփ Արեմաթացի» եկեղեցում, Ս. եւ անմահ Պատարագ մատուցեց՝ ձեռամբ արժ. Տ. Խաչատուր քհնյ. Զարգարեանի եւ մասնակցութեամբ հոգեւորականաց ու դպրաց դասերի: Երգեցողութեամբ հանդէս եկաւ Ս. Ամենափրկիչ վանքի «Կոմիտաս» երգչախումբը՝ ղեկավարութեամբ Արմէն Ամիրխանեանի:

Արարողութեանը ներկայ էին՝ ազգային մարմինների ներկայացուցիչներ, «Արմէն» տարրական կրթահամալիրի 5-րդ ու 6-րդ դասարանների եւ «Քանանեան» աղջ. ու «Կատարինեան» տղայոց միջնակարգ դպրոցների աշակերտ-ուհիները, տեսչութիւնները, ուսուցչական կազմերը, ծնողական խորհուրդներն ու հաւատացեալ ժողովուրդ:

Յընթացս արարողութեան պատարագիչ քահանայ հայրը հանդէս եկաւ օրւան պատշաճ իր քարոզով: Նա նշելով, որ մարդ արարածը դժուարութիւններին դիմակայում է իր հոգու զօրութեամբ, որն առաջանում է միայն հաւատի շնորհիւ, անդրադարձ ունեցաւ Աւարայրի ճակատամարտում անհնարինը հնարաւոր դարձնելու վճռակամութեամբ թշնամու դէմ ելած հայորդիներին ու նրանց զոհաբերութեան ոգուն: Նա ընդգծելով, որ Արցախեան յաղթանակը շարունակութիւնն էր Վարդանանց հերոսամարտում տարած յաղթանակի, աւելացրեց, թէ Արցախեան պատերազմի ազատամարտիկները, Վարդանանց հերոսների հաւատից ներշնչուած, կարողացան յաղթել թշնամու հսկայական բանակին եւ ազատագրել հայրենիքի այս թանկագին բեկորը: Այնուհետեւ քահանայ հայրը դիմելով ներկայ աշակերտներին՝ յորդորեց նրանց՝ սիրել դպրոցն ու ուսուցիչներին, սովորել եւ ուսումնասիրել աշխարհի զանազան գիտութիւններն ու ամուր կանգնել հաւատի ճամբին:

Վերջում Ս. Հաղորդութիւն ստացան հայոց դպրոցների աշակերտութիւնն ու ներկաները:

ԲՈՒՆ ԲԱՐԵԿԵՆԴԱՆ ՏՕՆԻ ԱՌԹԻՒ ՏԱՐԱՋԱՀԱՆԴԷՍ՝ «ՔԱՆԱՆԵԱՆ» ԴՊՐՈՑՈՒՄ

Նոր Ջուղայի հայոց ազգ. «Քանանեան» աղջկանց միջնակարգ դպրոցի տնօրինութեան, անձնակազմի եւ ծնողական խորհրդի համատեղ ջանքերի շնորհիւ տարիներ է, սոյն դպրոցի հարազատ յարկի ներքոյ բարի ապրելակերպ խորհրդանշող տօնի՝ Բուն Բարեկենդանի առթիւ կազմակերպւում է մրցոյթ-տարազահանդէս, որտեղ աշակերտուհիներն առիթ են ունենում դրսեւորելու իրենց ստեղծագործական ոգին ու ճաշակը:

Միջոցառումը տեղի ունեցաւ կիրակի՝ փետրուարի 26-ի երեկոյեան, հայոց ազգ. կրթահամալիրի կենտրոնա-կան դահլիճում, ուր աշակերտներից բացի ներկայ էին նաեւ դպրոցի տնօրինութիւնը, ուսուցչական կազմը, Ծնողական խորհրդի անդամներն ու մի շարք հրաւիրեալներ:

Ծրագրի մեկնարկը տրուեց «Քանանեան» վարժարանի փոխ-տնօրէն Ռիմա Սիմոնեանի ողջոյնի խօսքով, ապա օրուայ հանդիսավարը՝ նոյն դպրոցի շրջանաւարտ Շաղիկ Մատթէոսեանը, ով ընդունել էր յունական դիցաբանութեան կիսաստուած Մեդուզայի կերպարը, բացատրութեամբ ելոյթ ունեցաւ աւանդական այս տօնի սովորութիւնների ու ծէսերի շուրջ եւ ներկայացնելով մրցոյթի իրաւարար կազմին, պաշտօնապէս բացուած յայտարարուեց երկոն:

Մրցոյթ-տարազահանդէսի իրաւարար կազմի անդամներն էին՝ Սօսէ Ասատրեանը, Անի Տէր-Մարտիրոսեանն ու Ելենա Մանուկեան, ովքեր կերպարների գնահատման աշխատանքը կատարեցին հաշուի առնելով իմաստը, դրսեւորած ճաշակն ու միտքը եւ տարազի ստեղծման համար պահանջուած աշխատանքը: Տարազաւորների դերասանական ունակութիւնները կերպարի ներկայացման ուղղութեամբ նոյնպէս դերակատար հանդիսացաւ լաւագոյնների ընտրութեան հարցում:

Այնուհետեւ աշակերտուհիներն առանձնաբար ներկայացան յարթակի վրայ՝ ցուցադրելով իրենց հանդերձանքը եւ կերպարին համապատասխան խօսքեր ու բացատրութիւններ փոխանցելով:

Արդիւնքների ամփոփումից յետոյ երեկոյի լաւագոյնները ճանաչուեցին հետեւեալ կարգով.

Կերպարը լաւագոյնը մարմնաւորելու համար՝ գնահատուեց տատիկի դերում յայտնուած Սելին Մկրտչեանը.

Ճաշակի բաժնում միւսներին գերազանցեցին՝ Լուսին Մինասեանը՝ թռչունի եւ Անիշա Խաչեանը Ծովի կերպարներով:

Լաւագոյն մտքի բաժնում յաղթեց Նելիանա Գրիգորեանը՝ լուսնի հանդերձանքով ու դիմայարդարմամբ:

Լուսիա Մատթէոսեանը՝ ծաղկի եւ Մինէ Յարութիւնեանը Վարդագոյն արքայադստեր կերպարներով նոյնպէս լաւագոյններից ճանաչուեցին՝ տարազի պատարստման ուղղութեամբ կատարած բարդ աշխատանքի համար:

Երեկոյի ընթացքում տեղի ունեցան նաեւ ուրախ երաժշտութեան ներքոյ պարեր ու հիւրասիրութիւն, իսկ վերջում աշակերտներին բաժանուեցին աւանդական աղանձի կապոցներ:

ՏԵԱՌՆԸՆԴԱՌԱՋԻ, ՎԱՐԴԱՆԱՆՔԻ ՈՒ ԲՈՒՆ ԲԱՐԵԿԵՆԴԱՆԻ ՀԱՆԴԻՍԱՒՈՐ ՆՇՈՒՄԸ՝ ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ՄԱՆԿԱՊԱՐՏԷԶ-ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆՈՒՄ

Հայոց դպրոցն ու հայեցի դաստիարակութիւնը շաղկապած երեւոյթներ են: Հայոց դպրոցում մատաղ սերնդի հոգում սերմանւում են մեր ազգային ու հոգեւոր արժէքները՝ ինչը համարւում է հայկական վարժարանների առաջնահերթ առաքելութիւնը:

Նոր Ջուղայի հայոց ազգային մանկապարտէզ-նախակրթարանի տեսչութեան, ուսուցչական կազմի եւ Ծնողական խորհրդի համար փետրուար ամիսն առանձնայատուկ նշանակութիւն ունի, քանի որ նրանց համատեղ ջանքերի շնորհիւ շուրջ 15 օրերի ընթացքում տօնւում են հայ եկեղեցու եւ ազգային-աւանդական կարեւոր տօներից Տեառնընդառաջը, Վարդանանքն ու Բուն Բարեկենդանը: Դպրոցի պատասխանատուների համար նշուած տօները լաւագոյն առիթն են հանդիսանում, որպէսզի հետաքրքիր միջոցառումների կազմակերպմամբ կատարեն իրենց առաքելութիւնը՝ երեխաներին հայեցի կրթելու եւ նրանց հայկական արժէքներին հաղորդ դարձնելու ուղղութեամբ:

Տեառնընդառաջի նախատօնակը նշուեց երկուշաբթի՝ փետրուարի 13-ի առաւօտեան: Տօնի առթիւ դպրոց այցելեցին արժ. Տ. Վարդան քհնյ. Աղաբաբայեանն ու բրշ. Ալբերտ սրկ. Ղազարեանը: Տօնակատարութիւնն սկիզբ առաւ դպրոցի բակում՝ տօնին առնչուող շարականների եւ «Տէրունական աղօթք»-ի կատարմամբ: Այնուհետեւ դպրոցի կրտսերագոյն եւ աւագ աշակերտները քահանայ հօր հետ միասնաբար բոցավառեցին զարդարուած աւանդական թուփը: Աւարտին բոլորը միմեանց ձեռքերը բռնած շրջելով բոցկլտող խարոյկի շուրջ՝ երգեցին եւ ուրախացան, հիւրասիրուեցին համեղ հրուշակով, իսկ մանուկները ուսուցչուհիների օգնութեամբ թռան խարոյկի վրայից:

Սրբոց Վարդանանց յաղթանակի տօնը նշելու համար՝ չորեքշաբթի փետրուարի 22-ի առաւօտեան, մանկապարտէզ-նախակրթարանի տեսչութեան հրաւէրով դպրոց այցելեց «Արմէն» տարրական կրթահամալիրի ուսուցչուհի Արմինէ Սիմոնեանը: Նա սկզբում դիւրին բացատրութեամբ անդրադարձաւ Վարդան Մամիկոնեանի ու նրա քաջարի զինուորների սխրագործութիւններին՝ երեխաներին շեշտելով՝ կրօնի եւ հայկական արժէքների պահպանման կարեւորութիւնը: Շարունակութեան մէջ երեխաներին ներկայացաւ «Վարդան զօրավար»-ը, որի զինազգեստի մասին առաւել բացատրութեամբ հանդէս եկաւ ուսուցչուհի Սիմոնեանը: Միջոցառումը եզրափակուեց սաների հայրենասիրական երգերի կատարմամբ եւ Վարդան զօրավարի խրատական խօսքերով, ով յորդորեց ամէն գնով պահպանել հայրենիքը եւ մայրենի լեզուն:

Բուն Բարեկենդանի տօնը նշուեց կիրակի՝ փետրուարի 26-ի առաւօտեան՝ հաճելի եւ անակնկալներով յագեցած մի միջոցառմամբ: Բոլոր սաներն ընդունել էին գեղանկարչի կերպար՝ համապատասխան դիմայարդարմամբ ու գլխարկներով: Օրն անցաւ բուռը խանդավառութեամբ: Սաներն առանձնաբար լուսանկարուեցին, ապա բակում դիմաւորեցին երկու ծաղարծուների, ովքեր իրենց չարաճճի արարքներով մթնոլորտն առաւել զւարճալի դարձրին: Վերջում ծաղրածուների միջոցով աշակերտներին բաժանուեցին քաղցրաւենիքի կապոցներ:

ՍՊԱՀԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԻ ԱՅՑԸ Ն.Ջ. ՀԱՅ Մ.Մ. «ԱՐԱՐԱՏ» ՄԻՈՒԹԻՒՆ

Սպահանի Քաղաքային խորհրդի անդամ տկն. Վաշիեանփուռը, չորեքշաբթի՝ թւականիս յունուարի 18-ի երեկոյեան ժամը 5:30-ին, նախապէս ճշտուած ժամադրութեամբ, այցելեց Նոր Ջուղայի Հայ Մ.Մ. «Արարատ» միութիւն: Այցի նպատակն էր ծանօթանալ միութիւնում կատարուող մարզա-մշակութային աշխատանքներին:

Նրան դիմաւորեցին միութեան կենտրոնական եւ Մարզական միաւորի վարչութիւնների ներկայացուցիչներն ու ներքին վարիչը, որոնց ուղեկցութեամբ քաղաքային խորհրդի անդամն այցելեց միութեան մարզասրահ, որտեղ մարզւում էին աղջ. երէց բասկետբոլի խումբը: Տկն. Վաշիեանփուռը խմբի անձնակազմի հետ ծանօթանալուց յետոյ Նոր տարւայ եւ Ս. Ծննդեան տօների առիթով շնորհաւորանքի եւ բարեմաղթանքների խօսքեր ուղղեց նրանց: Նա որպէս Քաղաքային խորհրդի միակ կին անդամ, որի ուշադրութեան կենտրոնում են յատկապէս կանայք եւ հետաքրքրուած է կանանց հարցերով, իր պատրաստակամութիւնը յայտնեց հնարաւորութեան սահմաններում աջակցել միութեան յարկի ներքոյ կատարուող մարզա-մշակութային աշխատանքներին:

Շարունակութեան մէջ արտայայտուեց կենտրոնական վարչութեան անդամ՝ Ադրինէ Խաչատրեանը, ով ողջունելով տկն. Վաշիեանփուռի այցը «Արարատ»

միութիւն, ծանօթացման նպատակով տեղեկութիւններ փոխանցեց միութեան կառոյցի, առաքելութեան եւ ընդհանրապէս ծաւալւող մարզա-մշակութային եւ դաստիարակչական աշխատանքների մասին, ի մասնաւորի կենտրոնացաւ սուպեր լիգայի Բ կարգը նւաճած աղջ. բասկետբոլի խմբի յաջողութեանը եւ խօսեց Իրանի ազգային հաւաքականներում անւանի հայ մարզիկ-մարզուհիների եւ մարզիչների ներկայութեան մասին:

Աղջ. բասկետբոլի մարզիչ Զամանփուռը եւս բարձր գնահատեց հայ մարզիկների կարողութիւններն ու միութեան հնարաւորութիւնները եւ անդրադարձաւ մրցոյթներին մասնակցելու առումով պետական աջակցութիւնների կարեւորութեանը:

Առողջապահութեան, քաղաքային ծառայութեան, մարզա-մշակութային եւ հասարակական յանձնաժողովների անդամը լինելով տկն. Վաշիեանփուռը խոստացաւ ցանկացած հարցով աջակցութիւն ցուցաբերել միութեանը: Վերջում բասկետբոլի խմբի անդամներին, մարզիչին, խմբի պատասխանատու՝ Ռիմա Պետրոսեանին եւ վարչութեան անդամ Անահիտ Սարհատեանին յանձնեց գնահատագրեր:

Համեստ ընդունելութեան սեղանի շուրջ շարունակւեց զրոյցը եւ վերջում յարգելի հիւրը ուղեկցութեամբ միութեան պատասխանատուների շրջեց միութեան բաժինները եւ իր հիացմունքն յայտնեց միութեան կառոյցի, հնարաւորութիւնների, տարւող աշխատանքների եւ կազմակերպւածութեան մասին:

Հանդիպումն աւարտւեց փոխադարձ շնորհակալական խօսքերով ու բարեմաղթանքներով:

«ՖԱՋՐ» ԹԱՏԵՐԱԿԱՆ 35-ՐԴ ՓԱՌԱՏՕՆՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ «ՍԱՐ» ԹԱՏԵՐԳՈՒԹԻՒՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎԵՑ ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ ՀԱՅ Մ.Մ. «ԱՐԱՐԱՏ» ՄԻՈՒԹԵԱՆ ԴԱՀԼԻՃՈՒՄ

Նոր Ջուղայի Հայ Մ.Մ. «Արարատ» միութեան կենտրոնական վարչութեան հրաւէրով, ուրբաթ՝ թւականիս յունւարի 27-ի ժամը 19:30-ին նոյն միութեան դահլիճում բեմականացւեց «Ֆաջր» թատերական 35-րդ միջազգային փառատօնի շրջանակներում ներկայացւած «Սար» թատերգութիւնը:

Ներկայացման դրամատուրգ, բեմադրիչ եւ դերասան Միհրան Թորոսեանը իւրովի մօտեցումով՝ մեկնաբանեց Հայ ժողովրդի կազմաւորումը եւ նրա ապրած կեանքի վերիվայրումները, ապա իրականացւած Հայոց Ցեղասպանութիւնն ու նրա հետեւանքով սփիւռքի ձեւաւորումը: Ներկայացումը շարունակւեց հայոց պատմութեան հետագայ զարգացումներով եւ շեշտը դրւեց միասնութեան գաղափարի վրայ, ինչը աւարտւեց վերածնունդը ներկայացնող խորհրդանիշով եւ հայ ժողովրդի յաւերժութեան եւ լուսաւոր ու պայծառ ապագայ ունենալու պատգամով:

Այդ բոլորը սիմուլիկ կերպով կատարւեց «Սրբազան լեռան» լեզւով, առանց բառերի, լուռ ու անխօս, սակայն նոյն լռութեան մէջ հզօր եւ խօսուն հոգեվիճակով եւ երաժշտական հետաքրքիր լուծումներով փոխանցւեց ներկայացման հիմքում ընկած պատգամը եւ յաջողւեց հանդիսատեսին ներքաշել պատմութեան մէջ, ապրել այդ բոլորը եւ հմայւել ներկայացման բարձր կատարողականութեամբ:

Յուզիչ եւ խոր տպաւորութիւն թողած ներկայացման աւարտին, հանդիսատեսին ողջունեց միութեան կենտրոնական վարչութեան անդամ Մանիա Ղուկասեանը, ով ներկայացրեց «Ոտաբիբիկների խումբ» անուան թատերախմբի գեղարուեստական ղեկավար՝ Միհրան Թորոսեանին եւ նրան ընկերակցող երաժշտական ձեւաւորող եւ համադրող «Ուստա Սարոյին» ու նրա միւս ընկերներին եւ անդրադարձաւ Իրան ժամանելու խմբի առաքելութեանը:

Ճահինշահրի հայ համայնքի հոգեւոր տեսուչ Տ. Անանիա Ծ. վրդ. Գուճանեանի, թեմի Պատգամաւորական ժողովի եւ Թեմական խորհրդի ատենապետների եւ միութեան կենտրոնական վարչութեան նախագահի ձեռամբ յուշանուէր յանձնուեց թատերախմբի անձնակազմին:

Մ. Թորոսեանի առաջարկով տեղի ունեցաւ զրոյց հանդիսատեսի հետ: Այս բաժնում նախ Միհրանը հակիրճ կերպով տեղեկութիւններ փոխանցեց թատերախմբի եւ նրա գործունէութեան եւ Պոլսի հայկական համայնքի ու կառոյցների մասին, այնուհետեւ ներկաներից իրենց տեսակէտը յայտնեցին բեմադրութեան մասին եւ հարցումներ ուղղեցին հայ-թրքական յարաբերութիւնների շուրջ, որոնց պատասխանեցին բեմադրիչն ու նրան ընկերակցող խմբի անդամները:

Երեկոյի եզրափակիչ խօսքը վերապահուած էր գերպ. Տ. Անանիա Ծ. Վրդ. Գուճանեանին, ով Սպահանի Հայոց թեմի ազգային իշխանութեան եւ ժողովրդի անունից ողջունեց խմբի ներկայութիւնը եւ իր ուրախութիւնը յայտնեց գեղեցիկ, բարդ եւ միաժամանակ դիւրըմբռնելի ներկայացման համար եւ ասաց, որ մեր՝ Սպահանի Հայոց թեմի զաւակների սրտում եւ կեանքում միշտ տեղ է ունեցել Հայոց Ցեղասպանութիւնն ու «Արարատ» լեռը. մենք նրանցով ապրել, շնչել եւ թրծուել ենք եւ դրա պատճառով էր, որ այն ինչ ներկայացուեց, մեզ համար դիւրին եղաւ ըմբռնել, հասկանալ եւ ապրել այդ բոլորը: Հայր Սուրբը նաեւ իր շնորհակալութիւններն ու երախտագիտութիւնը յայտնեց ներկայացմանը մասնակից արուեստագէտ երիտասարդներին, ովքեր իրենց ուսերի վրայ վերցնելով ամէն տեսակ վտանգ պայքարում են անխօս ներկայացման միջոցով եւ ասաց. «*Մենք գլուխ են խոնարհում ձեր առջեւ եւ վստահ եղէք, որ մեր Թեմի ազգային իշխանութիւնը, մեր համայնքը եւ մեր ժողովուրդը միշտ լինելու է ձեր կողքին*»:

ՀՄԸՄ-Ի ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՏԵՆԱՊԵՏ ԳԱՌՆԻԿ ՄԿՐՏՉԵԱՆԸ ՀԻՒՐԸՆԿԱԼԻԵՑ Ն.Ջ. ՀԱՅ Մ.Մ. «ԱՐԱՐԱՏ» ՄԻՈՒԹԵԱՆ ՅԱՐԿԻ ՆԵՐՔՈՅ

Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան (ՀՄԸՄ) կենտրոնական վարչութեան ատենապետ՝ Գառնիկ Մկրտչեանը, շաբաթ՝ թուականիս փետրուարի 4-ի ժամը 18:30-ին, ժամանեց Նոր Ջուղայի Հայ Մ.Մ. «Արարատ» միութիւն: ՀՄԸՄ-ի Կ. վարչութեան ատենապետին ուղեկցում էին Թեհրանի Հայ Մշակութային «Արարատ» կազմակերպութեան շրջանաւարտ կենտրոնական վարչութեան նախագահ՝ Գէորգ Վարդանեանը, փոխ-նախագահ՝ Ալեքս Կարապետեանը եւ կենտրոնական վարչութեան գրասենեակի պատասխանատու՝ Սեւան Ծառուկեանը: Հիւրերին դիմաւորեցին միութեան արտօնատէրը, կենտրոնական վարչութեան անդամները եւ Հայ Դատի յանձնախմբի ներկայացուցիչները: Միութեան Սկաուտական միաւորի անդամները պատուի առած ողջունեցին ՀՄԸՄ-ի ատենապետին:

Յարգելի հիւրերի ներկայութիւնը ողջունեց եւ բարի գալստեան խօսք ասաց միութեանս կենտրոնական վարչութեան նախագահ Մասիս Մինասեանը:

ՀՄԸՄ-ի ատենապետը շնորհակալութիւն յայտնելով ընդունելութեան համար, իր ուրախութիւնը յայտնեց հանդիպումը կազմակերպելու կապակցութեամբ, ապա տեղեկութիւններ փոխանցեց «Առողջ միտք, առողջ մարմնի մէջ» նշանաբանի ներքոյ աշխատող ՀՄԸՄ-ի առաքելութեան, վարչական դրուածքի եւ մասնաճիւղերի մասին, որոնց նպատակն է պատրաստել ֆիզիքապէս տոկուն, հոգեւոր բարձր արժէքների տէր հայեր ու

քաղաքացիներ. նրանց մօտ զարգացնել փոխադարձ օգնութեան գիտակցութիւնը եւ համերաշխութեան, պատասխանատուութեան ու պատուի զգացումը: Նաեւ հակիրճ կերպով անդրադարձաւ Պոլսում սկիզբ առած եւ յետագային Հայաստանում, ապա Սփիւռքում ձեւաւորուած ՀՄԸՄ-ի պատմականին, զարգացման փուլերին ու այսօրուայ դրուածքին:

Գառնիկ Մկրտչեանը կարեւոր համարեց Հայրենիք-Սփիւռք կապերը ամրապնդելու եւ հայրենիքի շուրջ համախմբելու ՀՄԸՄ-ի ծրագրերն ու համահայկական բովանդակութիւն ունեցող միջոցառումները եւ նշեց, որ սկաուտական բանակումների եւ մարզախաղերի կազմակերպումը մշտապէս եղել է ՀՄԸՄ-ի ուշադրութեան կենտրոնում եւ յոյս յայտնեց իրանահայ միութիւններն ու կազմակերպութիւնները եւս մասնակցութիւն բերեն առաջիկայ միջոցառումներին, յատկապէս ՀՄԸՄ-ի հիմնադրման 100-ամեակին նուիրուած ծրագրերին:

Միութեան արտօնատէր՝ Թաթուլ Օհանեանը եւս իր հերթին ողջունեց ՀՄԸՄ-ի կենտրոնական վարչութեան ատենապետի այցը՝ Նոր Ջուղա եւ պատմական ակնարկով անդրադարձաւ միութեան հիմնադրման, առաքելութեան եւ հինգ միաւորների միջոցով իրականացուող մարզա-մշակութային եւ դաստիարակչական աշխատանքներին եւ նշեց, որ «Արարատ» միութեան մէջ կարեւոր տեղ եւ նշանակութիւն ունի համազգային մօտեցումը եւ որ մեր զաւակները այդպիսի դաստիարակութեամբ են մեծանում: Միութեան արտօնատէրը խօսքը աւարտեց շնորհակալական խօսքերով ուղղուած պրն. Մկրտչեանին՝ Նոր Ջուղա ժամանելու եւ նրան ընկերակցող ՀՄԱԿ-ի կենտրոնական վարչութեան ներկայացուցիչներին՝ հանդիպումը կազմակերպելու եւ ուղեկցելու կապակցութեամբ:

Միութեան կենտրոնական վարչութեան անդամ եւ Սկաուտական միաւորի կապ Մանիա Ղուկասեանը եւս բախտաւորութիւն համարեց պրն. Մկրտչեանի ներկայութիւնը, նրան հաղորդակից դարձնելով միութեան Սկաուտական միաւորի իրավիճակին, պայմաններին, կառոյցին ու աշխատելաոճին: Նա 2014 թւականին ՀՄԸՄ 10-րդ բանակումին իր մասնակցելը համարեց ուրախալի երեւոյթ եւ յոյս յայտնեց, որ այսուհետ եւս հնարաւորութիւն կստեղծի մասնակից դառնալու ՀՄԸՄ-ական բոլոր միջոցառումներին:

ՀՄԱԿ-ի կենտրոնական վարչութեան նախագահ՝ Գէորգ վարդանեանը նշեց, որ 2000 թւականից ՀՄԱԿ-ը օրգանական կապով, կապեր ունի ՀՄԸՄ-ի հետ եւ խողովակ է հանդիսացել իրանահայ միւս միութիւնների հետ, սակայն այսօր առարկայական եւ ենթակայական պայմաններն այնքան են զարգացել, որ միութիւններն ունեն հնարաւորութիւն ուղղակի կապեր հաստատելու: Նա նշեց, որ Իրանում հայկական Սկաուտիզմը բաւականին զարգացած է եւ թէեւ գործում է ապակենտրոն, սակայն նոյն ապակենտրոնացման մէջ գոյութիւն ունի մեծ կենտրոնացում եւ խնդրեց, որ Սկաուտական համաշխարհային կոմիտէին բացատրական կարգով ներկայացնել՝ համշխարհային Սկաուտական մեր իրաւունքների մասին, որպէսզի մենք եւս հնարաւորութիւն ունենանք մասնակցելու համաշխարհային բանակումներին:

Հայ Դատի յանձնախմբից ողջոյնի եւ շնորհակալական խօսքերով արտայայտուեց Դրօ Մարգարեանը:

Հանդիպման աւարտին յուշանուէրներ փոխանակուեցին ՀՄԸՄ-ի եւ միութեան կենտրոնական վարչութեան ատենապետերի միջեւ: Սկաուտական միաւորի Գերագոյն մարմինը եւս Գառնիկ Մկրտչեանին նուիրեց միութեան Սկաուտական աշխատանքային զգեստը եւ վերջերս հրատարակուած 3-րդ կարգի գիտելիքների գրքոյկը: Հանդիպման աւարտին պրն. Մկրտչեանը ընկերակցութեամբ միւս հիւրերի եւ միութենականների, շրջելով միութիւնում՝ ծանօթացաւ կառոյցին, գործունէութեանը եւ միութեան շրջափակում ծաւալուող շինարարական աշխատանքներին:

Ն.Դ. ՀԱՅ Մ.Մ. «ԱՐԱՐԱՏ» ՄԻՈՒԹԵԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ ԳՆԱՀԱՏԵՑ ՄԻՈՒԹԵԱՆ ԱՂՋ. ԲԱՍԿԵՏԲՈԼԻ ԵՐԷՑ ԽՄԲԻՆ

Նոր Ջուղայի Հայ Մ.Մ. «Արարատ» միութեան աղջ. բասկետբոլի երէց խումբը 2016 թւականին մասնակցելով երկրի մակարդակում կայացած Սուպեր լիգայի Բ կարգի մրցաշարին՝ հանդէս եկաւ գեղեցիկ ու որակեալ խաղերով: Բասկետբոլիստուհիների այս յաղթանակը նշելու եւ արժեւորելու նպատակով, շաբաթ՝ փետրուարի 18-ի երեկոյեան, միութեան կենտրոնական վարչութիւնն ընդունեց բասկետբոլի խմբի անձնակազմին:

Կենտրոնական վարչութեան նախագահ՝ Մասիս Մինասեանը ողջունելով ներկաներին, շնորհաւորեց նուաճած ձեռքբերումը եւ այն համարեց միասնական աշխատանքի արդիւնք՝ շնորհակալութիւն յայտնելով խմբի մարզիչ Ազատէ Ջամանփուռին, խմբի պատասխանատու Ռիմա Պետրոսեանին, մարմնամարզումների պատասխանատու Անիա Յովսէփեանին, բոլոր բասկետբոլիստուհիներին, միութեան Մարզական միաւորի վարչութեանը եւ ի մասնաւորի Անահիտ Սարհադեանին, որ մշտապէս եղել է խմբի կողքին: Շնորհակալական խօսք ասաց նաեւ բոլոր այն մարզուհիներին, ովքեր մասնակից են եղել այս յաղթանակի ձեռքբերմանը եւ պայմանների բերումով բացակայում են այսօր: Պրն. Մինասեանը նաեւ իր ուրախութիւնը եւ հպարտութիւնը յայտնեց առ այն, որ խումբը համալրւում է նոր անդամներով: Նա նշեց, որ Նոր Ջուղան միշտ փայլել է իր մարզիկ-ուհիների նուաճած յաղթանակներով, մասնաւորապէս բասկետբոլի բնագաւառում ունեցել է ակնառու մարզիկներ, ովքեր, որպէս մարզիկ եւ մարզիչ մեծ յաջողութիւններ են արձանագրել:

Այնուհետեւ միութեան Կանանց բաժնի արտօնատէր, Իրանի ազգային հաւաքականի վաստակաւոր մարզիչ եւ Սպահանի բասկետբոլի խորհրդի անդամ Այլին Մելիքեանը շնորհակալութիւն յայտնեց խմբի անդամներին եւ շնորհաւորեց նուաճած յաղթանակի կապակցութեամբ: Նա շնորհակալութիւն յայտնեց նաեւ բոլոր նրանց, որոնց համագործակցութեան եւ աջակցութեան շնորհիւ խումբը հնարաւորութիւն է ունեցել մասնակցել նման մակարդակի մրցոյթների:

Ընթացքում շնորհաւորանքի եւ շնորհակալական խօսքեր արտայայտեցին խմբի մարզիչը, կենտրոնական վարչութեան անդամ եւ Մարզական միաւորի կապ Ադրինէ Խաչատրեանը, Մարզական միաւորի վարչութեան նախագահ Էդուարդ Ղազարեանը եւ մարզուհի՝ Լուսինէ Սէթ-Աղայեանը:

Հանդիպման աւարտին միութեան կենտրոնական վարչութեան եւ Մարզական միաւորի վարչակազմի անունից գնահատագրերով եւ յուշանուէրներով պարգեւատրեցին խմբի անձնակազմը:

Ն.Դ. ՀԱՅ Մ.Մ. «ԱՐԱՐԱՏ» ՄԻՈՒԹԵԱՆ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՄԻԱՒՈՐԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ ՄՈՒՏՔ ԳՈՐԾԱԾ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ

Նոր Ջուղայի Հայ Մ.Մ. «Արարատ» միութեան Ուսանողական միաւորի վարչութիւնը, ուրբաթ՝ փետրուարի 24-ի երեկոյեան, նոյն միութեան յարկի ներքոյ հանդիպում ունեցաւ ուսումնական ընթացիկ տարեշրջանում բարձրագոյն ուսումնական հաստատութիւններ մուտք գործած ուսանողների հետ:

Ողջոյնի խօսքից յետոյ, միաւորի վարչութեան փոխնախագահ՝ Անի Ղարախանեանը ներկայացրեց միաւորի արխիւային տեւալների հիման վրայ պատրաստուած մի ցուցանմուշ, որով ներկայացւում էր վերջին տարիներում տարբեր մակարդակներում պետական եւ ազատ համալսարաններ մուտք գործած երիտասարդ-ուհիների թւային պատկերը: Յաջորդիւ լուսանկարների ցուցադրման զուգահեռ ներկայացրեց միաւորի ծաւալած գործունէութիւնից համառօտ զեկոյց, նաեւ միաւորի ապագայ ծրագրերը՝ առաջարկելով նրանց մասնակցութիւնը միաւորի աշխատանքներում:

Յաջորդ բաժնում երիտասարդ գիւտարար՝ Ռուբէն Մինասեանը,

ով զբաղեցնում է նաեւ միաւորի վարչութեան նախագահի հանգամանքը, հանդէս եկաւ համացանցից մասնագիտական ճշգրիտ եւ գիտական արժէք ունեցող նիւթերի որոնման, անվճար ներբեռման եւ որեւէ գիւտի գրանցման մասին բացատրութիւններով եւ խորհուրդ տուեց իրացնել համակարգչային ծրագրերը, ուսումնասիրել նախասիրութիւնները, աշխատել ստեղծել նորը եւ այն գրանցել: Նա միաւորի վարչութեան եւ անդամների անունից պատրաստակամութիւն յայտնեց՝ նորամուտ ուսանողներին աջակցութիւն եւ համագործակցութիւն ցուցաբերելու:

Կենտրոնական վարչութեան նախագահ՝ Մասիս Մինասեանը եւս իր հերթին արտայայտուեց շնորհաւորանքի եւ բարեմաղթանքների խօսքերով՝ ուղղուած ուսանողներին եւ նրանց ընտանիքներին, յաջողութիւն մաղթելով ուսման եւ կեանքի բոլոր ասպարէզներում: Պրն. Մինասեանը նշեց, որ Ուսանողական միաւորը միութեան այն կարեւոր հատուածն է, որտեղ միաւորւում եւ համախմբւում են ուսանողները, եւ հնարաւոր է դառնում միմեանց հետ հաղորդուելով, աշխատանքների շրջանակում գիտելիքներ փոխանցել: Վերջում նա յոյս յայտնեց, որ նորամուտ ուսանողները մասնակից կը դառնան միաւորի աշխատանքներին:

Հանդիպման աւարտին նորամուտ ուսանողներին յանձնուեց գնահատագրեր:

Երեկոն աւարտուեց միասնական լուսանկարուելով եւ համեստ ընդունելութեամբ:

ՀԱՄԱԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՕՆԱԽՄԲՈՒԹԻՒՆ՝ ԲՈՒՆ ԲԱՐԵԿԵՆԴԱՆԻ ՏՕՆԻ ԱՌԹԻՒ

Ն.Ջ. Հայ Մ.Մ. «Արարատ» միութեան կենտրոնական վարչութեան նախաձեռնութեամբ եւ համագործակցութեամբ միութեան Երէցների եւ Մշակութային միաւորների, կիրակի՝ փետրուարի 26-ի երեկոյեան, միութեան մարզասրահում նշուեց հայկական աւանդական Բուն Բարեկենդանը:

Ներկաներին ողջունեցին օրուայ հանդիսավարուհիներ՝ Ալինա Տէր-Սուքիասեանը եւ Վանա Շիրուանեանը, ապա անդրադարձան Բարեկենդան տօնի ծագմանը եւ պատկան ծէսերին ու աւանդոյթներին: Յաջորդիւ դիմակահանդէս մրցոյթին մասնակցող անձինք հրաւիրուեցին եւ զբաղեցրին շքեղ բեմահարթակի շուրջ նախատեսուած նստարանները, որտեղից հերթաբար բեմ ելան աւելի քան 80 մասնակիցներ եւ ցուցադրեցին հետաքրքիր մտայղացումներով պատրաստուած տարազներ ու կերպարներ:

Բեմահարթակի յարդարումը եւ տարազների ներկայացման բաժինը իրականացուեց Մշակութային միաւորի միջոցով: Ներկայացուած տարազները եւ կերպարները իրաւարար կազմի գնահատմամբ, ըստ կերպարի մտայղացման, ճաշակի եւ տարած աշխատանքի ստացան գնահատականներ: Գնահատականների ամփոփումից յետոյ ամենից շատ միաւոր հաւաքած տարազ-

ները յայտարարեցին որպէս լաւագոյններ եւ պարգեւատրեցին: Ոչ մրցութային բաժնում հանդէս եկան նաեւ մեծ թւով տարազաւորներ, այդ թւում մեծ ուշադրութիւն գրաւեց աշխարհի ստեղծման եօթ օրերը ներկայացնող կերպարների խումբը:

Հանդիսութեան ընթացքում բազմահարիւր ներկաներ վայելեցին Երէցների միաւորի պատրաստած աւանդական ճաշատեսակները, աղանձը, քաղցրաւենիքները եւ այլ ուտեստները:

Նշելի է, որ միաւորը կազմակերպել էր նաեւ դիմակների վաճառք, ինչպէս նաեւ նախատեսւել էր դիմայարդարման կրպակ, համագործակցութեամբ Մառիետ Աբէլեանի եւ Անաշիա Մելիքեանի: Նախատեսւել էր նաեւ Յովհաննէս Թումանեանի «Բարեկենդան» հեքիաթի կերպարներով զարդարուած տաղաւար՝ լուսանկարւելու համար:

Իրաւարար կազմը ներկայացնում էր Ալենուշ Մարտոյեանը, Վիոլետ Թորոսեանը, Հերմինէ Վարդանեանը եւ Էլենա Փուլադեանը:

ԲՈՒՌՆ ԱՇԽՈՒԺՈՒԹԻՒՆ՝ ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ ՀԱՅ ԿԱՆԱՆՑ ԳԹՈՒԹԵԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ՅԱՐԿԻ ՆԵՐՔՈՅ

2017 թւականը բուռն աշխուժութեամբ է մեկնարկել՝ Նոր Ջուղայի Հայ Կանանց Գթութեան միութեան համար՝ կազմակերպւած միջոցառումների եւ հայոց ազգ. ծերանոց կատարւած այցելութիւնների շնորհիւ:

Սպահանի հայոց թեմի կաթողիկոսական փոխանորդ գերպ. Տ. Սիփան Ծ. վրդ. Քէչէճեանը, Շահինշահի հայ համայնքի հոգեւոր տեսուչ գերպ. Տ. Անանիա Ծ. վրդ. Գուճանեանը, ազգային մարմինների ներկայացուցիչները, Սպահան քաղաքի ընդհանուր եւ 5-րդ շրջանի քաղաքապետերը, պետական բարձրաստիճան այլ պաշտօնատարերն ու Հայ ուս. Չհարմահալ միութեան Նոր Ջուղայի մասնաճիւղի վարչութիւը ամանորի առթիւ այցելութիւններ են կատարել հայոց ազգ. ծերանոց, որոնց մասին ժամանակին իրազեկում կատարւել է, իսկ այլ աշխատանքներին կանդրադառնանք ստորեւ:

Ամանորի թոհուբոհին՝ երեքշաբթի՝ յունուարի 3-ի երեկոյեան ժամը 4-ին, միութենականների եւ հայոց ազգ. ծերանոցի բնակիչների ու աշխատակազմի մասնակցութեամբ կազմակրպւեց միջոցառում: Ծրագրում տեղ էին գտել Զմեռ պապիկի այցելութիւն, հիւրասիրութիւն, երգ, պար եւ զանազան անակնկալներ, որոնց միջոցով բազմապատկւեց ներկաների տօնական տրամադրութիւնը: Ընթացքում տօնի առթիւ շնորհաւորանքներ եւ բարեմաղթանքներ փոխանցեց միութեան վարչութեան նախագահուհի Արմինէ Սիմոնեանը, ապա Զմեռ պապիկը նւէրներ պարգեւեց տարեցներին՝ նրանց մաղթելով քաջառողջութիւն եւ երկար կեանք:

Հինգշաբթի՝ փետրուարի 16-ի երեկոյեան, միութեան անդամուհիների եւ ծերանոցի բնակիչների ու աշխատակազմի ներկայութեամբ նշուեց Տեառնընդառաջը: Արարողութեան բաժինն իրականացուեց արժն. Տ. Խաչատուր քհնյ. Զարգարեանի միջոցով, որի աւարտին բոցավառուեց թուփը, իսկ ներկաները հիւրասիրուեցին աւանդական հրուշակով: Ապա քահանայ հօրն ուղղուած շնորհակալական խօսքով հանդէս եկաւ նախագահուհի Արմինէ Սիմոնեանը, ընդգծելով, որ ծերանոցը միշտ եղել է թեմի հոգեւորականց դասի ուշադրութեան կիզակէտում եւ տեղի բնակիչները տարբեր առիթներով վայելել են նրանց ներկայութիւնն ու օրհնանքը:

Ընդունուած կարգի համաձայն երկար տարիներ է, ինչ վարչութեան կողմից 15 օր մի անգամ յաճախականութեամբ անդամուհիների համար կազմակերպւում են զանազան թեմաներով նիստեր ու դասընթացներ: Այս շրջագծում վարչութիւնը ձեռնամուխ է եղել 2017 թուականի ընթացքում կազմակերպել հոգեբանա-դաստիարակչական նիւթերով հանդիպումներ՝ Շահինշահի հայ համայնքի հոգեւոր տեսուչ գերպ. Տ. Անանիա Ծ. վրդ. Գուճանեանի դասախօսութեամբ: Գերպ. Հայր Սուրբը յունուարի 31-ին եւ փետրուարի 21-ին ներկայանալով միութեան կենտրոնատեղի՝ մասնագիտականօրէն անդրադարձ ունեցաւ «Այսօրուայ երիտասարդն ու դաստիարակութեան արդի մեթոդները» թեմային եւ պատասխանեց ներկաների հարցերին: Վերոնշեալ ուսուցողական նիստերը մեծ ընդառաջում են գտել անդամուհիների կողմից:

Կիրակի՝ փետրուարի 26-ի առաւօտեան, «Կատարինեան» տղայոց միջնակարգ դպրոցի 7-րդ եւ 8-րդ դասարանի սաները Բուն Բարեկենդան տօնը պատեհ առիթ համարելով այցելեցին ծերանոց՝ տեղի բնակիչների տօնական խանդավառութիւնն ու տրամադրութիւնը բազմապատկելու նպատակով: Տղաներին ուղեկցում էին իրենց ուսուցիչներն ու դպրոցի Ծնողական խորհրդի ներկայացուցիչները: Այցելուներին ողջոյնի եւ բարիգալստեան խօսք ուղղեց Կանանց Գթութեան միութեան վարչութեան անդամ Լիդա Սիմոնեանը: Ընթացքում օրուայ առթիւ բացատրութիւններով հանդէս եկաւ ուսուցչուհի Միգանուշ Տէր-Մարտիրոսեանը, որից յետոյ ծրագիրը շարունակւեց երգերի կատարմամբ, պարով ու մրցոյթներով: Իսկ միջոցառումն իսկական տօնի վերածուեց յատկապէս, երբ դպրոցի Ծնողական խորհրդի կողմից նախատեսւած դիմակները կրեցին տարեցներն ու դպրոցական տղաները:

ՀԱՅ ՈՒՍ. ՉԱՐՄԱՀԱԼ ՄԻՈՒԹԵԱՆ ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ ՄԱՍՆԱՃԻՒՂԻ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ՝ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԾԵՐԱՆՈՑ

Երկուշաբթի՝ յունուարի 9-ի առաւօեան, Հայ ուս. Զարմահալ միութեան Նոր Ջուղայի մասնաճիւղի վարչութեան անդամներն Ամանորի եւ Ս. Ծննդեան տօների առթիւ այցելեցին հայոց ազգ. ծերանոց, ուր նրանց ջերմ դիմաւորեցին Հայ կանանց գթութեան միութեան վարչութեան ու ծերանոցի յանձնախմբի ներկայացուցիչները եւ սոյն հաստատութեան տարեց բնակիչները:

Այնուհետեւ այցելութիւն տւած միութեան անունից Նոր տարին եւ Յիսուս Քրիստոսի Ս. Ծնունդն ու մկրտութիւնը շնորհաւորեց վարչութեան նախագահ Վրթանէս Մկրտչեանը, ով փոխանցելով իր սրտաբուխ բարեմաղթանքները, շնորհակալութիւն յայտնեց Կանանց Գթութեան միութեան վարչութեանը՝ սոյն հանգստի տան մէջ իրենց հիւրընկալելու առթիւ:

Ողջոյնի խօսքով եւ տօնական մաղթանքներով նոյնպէս արտայայտուեց Կանանց գթութեան միութեան վարչութեան անդամուհի Լիդա Սիմոնեանը, ապա այցելութիւնը շարունակւեց ուրախ եւ խանդավառ մթնոլորտում՝ հիւրասիրութեան սեղանի շուրջ, տարեց բնակիչների հետ ջերմ զրոյցների ներքոյ:

ԱՄԱՆՈՐԵԱՅ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՆԴԵԱՆ ՏՕՆԵՐԻ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ ՇԱՀԻՆՇԱՀՐՈՒՄ

Կիրակի՝ 2017 թւականի յունուարի 1-ի երեկոյեան, Շահինշահրի «Սրբոց Վարդանանց» դպրոցի սրահում տարեմուտի առթիւ մատուցւեց սուրբ եւ անմահ Պատարագ՝ համայնքի հոգեւոր տեսուչ Գերպ. Տ. Անանիա Ծ. վրդ. Գուճանեանի նախագահութեամբ, արժն. Տ. Սահակ քհնյ. Մինասեանի ձեռամբ եւ դպրաց դասի մասնակցութեամբ:

Արարողութեանը ներկայ էր հաւատացեալ ժողովուրդը, ով Ս. Պատարագի ընթացքում հաղորդութիւն ստացաւ եւ տարւայ առաջին օրը Բարձրեալին գոհութիւն յայտնելով՝ հայցեց մարդասէր Աստծու օրհնութիւնն ու գթառատութիւնը:

Յաւարտ Ս. Պատարագի, գերպ. Հայր Սուրբն աղօթելով առ Աստուած օրհնեց բոլորին եւ մաղթեց բարեբեր, խաղաղ ու յաջողութիւններով լի տարի:

Իսկ Հինգշաբթի՝ յունուարի 5-ին, կէսօրից յետոյ ժամերգութիւն եւ Ճրագալոյցի Ս. Պատարագ մատուցւեց՝ գերպ. Տ. Անանիա Ծ. վրդ. Գուճանեանի նախագահութեամբ, արժն. Տ. Սահակ քհնյ. Մինասեանի ձեռամբ եւ դպրաց դասի մասնակցութեամբ՝ համայնքի «Սրբոց Վարդանանց» նորոգուած եկեղեցում: Յաւարտ Ս. Պատարագի տեղի ունեցաւ նախատօնակ եւ աւետում Յիսուս Քրիստոսի Ս. Ծննդեան:

Այնուհետեւ ուրբաթ՝ յունուարի 6-ի առաւօտեան մատուցւեց Ս. Պատարագ՝ մեր Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի Ս. Ծննդեան եւ Աստուածայայտնութեան տօների առիթով՝ գերպ. Տ. Անանիա Ծ. վրդ. Գուճանեանի նախագահութեամբ, արժն. Տ. Սահակ քհնյ. Մինասեանի ձեռամբ եւ դպրաց դասի մասնակցութեամբ: Օրւայ խորհրդին ներկայ էին Հայ համայնքի վարչութիւնը, ուսուցչական կազմերը, ծնողական խորհուրդները, միութիւնների անձնակազմերի անդամները եւ ակնառու թւով հայորդիներ:

Գերպ. Հայր Սուրբն շնորհաւորեց համայնքի բոլոր անդամներին նորոգուած եւ բարեզարդուած եկեղեցու կապակցութեամբ եւ բարձր գնահատեց Սպահանի հայոց թեմի ազգային իշխանութեան՝ ի մասնաւորի Կրօնական խորհրդի նիւթաբարոյական հովանաւորութիւնը, համայնքի Վարչութեան հետեւողականութիւնն ու հաստատակամութիւնը սոյն նուիրական աշխատանքը իրագործելու մէջ: Հայր Սուրբն իր խօսքում ընդգծեց, որ բարեկարգուած եկեղեցի ունենալը երկար տարիներ համայնքի բոլոր անդամների գեղեցիկ երազանքն էր եղել եւ ահա այս բարեբաստիկ տօներին, արդէն համայնքը իրականացուած է տեսնում իր քաղցր ու վսեմ երազանքը: Նա օրհնեց բոլոր նրանց, ովքեր որեւէ կերպ աջակցութիւն էին ցուցաբերել այս ուղղութեամբ եւ առանձնապէս յիշեց Հայ համայնքի վարչութեան ատենապետ պրն. Մելքոն Շիրւանեանին, ով իր անխընայ հոգատարութեամբ եւ յանձնառութեամբ ստանձնել էր եկեղեցու նորոգման աշխատանքի կարեւոր պատասխանատուութիւնը: Իր խօսքի աւարտին գերպ. Հայր Սուրբը բարեմաղթեց, որ եկեղեցին միշտ ջերմանայ իր հաւատացեալների շունչ ու ջերմեռանդ աղօթքով եւ միշտ մնայ հաստատ ու կանգուն:

Իսկ յաւարտ Ս. Պատարագի կատարւեց Ջրօրհնէքի արարողութիւն՝ Էմիլ Բաբումեանի խաչքաւորութեամբ, որից յետոյ Հայր Սուրբն եւ օրւայ խորհրդի խաչքաւորի ընտանիքն ընդունեցին շնորհաւորանքներ եւ տեղի ունեցաւ համեստ հիւրասիրութիւն:

ԱՄԱՆՈՐԵԱՅ ՔԱՂԱՔԱՎԱՐԱԿԱՆ ԱՅՑ՝ ՇԱՀԻՆՇԱՀՐԻ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԴՊՐՈՑՆԵՐ

Ամանորեայ եւ Ս. Ծննդեան տօների առիթով, երեքշաբթի՝ 2017 թւականի յունուարի 3-ի առաւօտեան ժամը 8:00-ին, Շահինշահրի Ուսումնա-դաստիարակչութեան հիմնարկի պատասխանատուները եւ պաշտօնատարները շնորհաւորագրով եւ քաղցրաւենիքով այցելեցին Շահինշահրի «Սրբոց Վարդանանց» եւ «Մասիս» դպրոցներ եւ տեսակցութիւն ունեցան համայնքի հոգեւոր տեսուչ՝ Տ. Անանիա Ծ. վրդ. Գուճանեանի, Վարչութեան անդամների, դպրոցների տեսչութեան եւ ուսուցչական կազմերի հետ:

Իբրեւ սկիզբ զոյգ դպրոցի տեսուչ պրն. Ղոջավանդը բարիգալուստ մաղթելով այցելու պատուիրակու-

թեանը՝ ներկայացրեց նրանց դպրոցի անձնակազմին ու աշակերտներին:

Յաջորդիւ Ամանորեայ գեղեցիկ ողջոյնի խօսքով հանդէս եկաւ վերոնշեալ հիմնարկի տնօրէն պրն. Քամալը, ով իր անհուն ուրախութիւնն յայտնեց այս բարեբաստիկ տօների կապակցութեամբ, եւ հիացմունքով արտայայտուեց զոյգ դպրոցի բարեկարգ վիճակի, կարգապահութեան եւ աշակերտների ջանասիրութեան ու խելամտութեան մասին: Նա գոհունակութեամբ յայտնեց, թէ այսպիսի օրինակելի դպրոց ունենալը մեծ պարծանք է շրջանի կրթադաստիարակչութեան համար: Ապա իր բարեմաղթանքն ուղղելով բոլոր ներկաներին ցանկացաւ խաղաղ, համերաշխ ու նորանոր յաջողութիւններով լի տարի:

Գերպ. Հայր Սուրբի խօսքը եզրափակեց օրուայ արտայայտութիւնների պաշտօնական բաժինը, ով իր հայրական օրհնանքն ուղղելով բոլոր ներկաներին իր ուրախութիւնն ու շնորհակալութիւնն յայտնեց պաշտօնական հիւրերին, ովքեր իրենց ներկայութեամբ այս գեղեցիկ տօների ընթացքում՝ առաւել հրճւանք ու շուք հաղորդեցին կրթադաստիարակչական միջավայրին:

Գերպ. Հայր Սուրբն իր եւ համայնքի Վարչութեան անունից բարձր գնահատեց շրջանի Կրթա-դաստիարակչութեան բարեացակամութիւնը հայոց ազգային դպրոցների, պատասխանատուների եւ հայ աշակերտների նկատմամբ: Նա դրուատեց սոյն հիմնարկի պաշտօնատարների հետեւողականութիւնն ու ցուցաբերած հոգատարութիւնը, ովքեր նոյնիսկ աշակերտութեան թի զգալի նւազեցմամբ հանդերձ, երբեք չեն խնայում իրենց հովանաւորութիւնն ու համագործակցութիւնը՝ յօգուտ աշակերտների մտաւոր զարգացման եւ ուսումնա-դաստիարակչական առաջադիմութեան: Հայր Սուրբը բոլոր ներկաներին մաղթեց արեւշատութիւն, յաջողութիւն եւ աղօթեց առ Աստուած, որ 2017 թւականը համայն մարդկութեանը պարգեւի խաղաղութիւն, համերաշխութիւն եւ առաջադիմութիւն:

Օրուայ առիթով նախատեսւել էր համեստ հիւրասիրութիւն, որի ընթացքում պատւիրակութիւնը՝ գերպ. Հայր Սուրբի, համայնքի Վարչութեան ներկայացուցիչների եւ դպրոցի տեսչութեան հետ անցաւ խորհրդակցութիւնների՝ դպրոցի կրթադաստիարակչական մի շարք խնդիրների վերաբերեալ:

Դրական ու օգտաշատ որոշումներ ընդունելուց յետոյ, ներկաները լուսանկարւեցին եւ այցելեցին նաեւ դասարանները՝ աշակերտների հետ աւելի մտերմիկ մթնոլորտում շփւելու համար, եւ նորանոր ձեռքբերումներ մաղթելով նրանց հրաժեշտ տւեցին:

ՇԱՀԻՆՇԱՀՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԵՒ ՊԱՏԻՒԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ՝ ԱՄԱՆՈՐԵԱՅ ԵՒ Ս. ԾՆՆԴԵԱՆ ՏՕՆԵՐԻ ԱՌԻԹՈՎ

Կիրակի՝ 2017 թւականի յունւարի 15-ի յետմիջօրէի ժամը 3:00-ին, «Սրբոց Վարդանանց» դպրոցի շրջափակում Շահինշահրի հայ համայնքի պատասխանատուներին այցելեցին Շահինշահրի ուրբաթօրեայ աղօթապետը, գաւառապետի քաղաքական տեղակալը, քաղաքապետը ընկերակցութեամբ՝ գաւառապետարանի եւ քաղաքապետարանի բարձրաստիճան պաշտօնատարների եւ քաղաքի խորհրդի նախագահի ու անձնակազմի:

Դպրոցի սրահում հիւրերին ընդունեցին համայնքի հոգեւոր տեսուչ գերպ. Տ. Անանիա Ծ. վրդ. Գուճանեանը, արժն. Տ. Սահակ քհնյ. Մինասեանը եւ Հայ համայնքի վարչութեան անդամները:

Վարչութեան անունից բարիգալստեան խօսքով հանդէս եկաւ պրն. Արիս Դաւթեանը, ով Քրիստոսի Ծնունդն ու Աստուածայայտնութեան խորհուրդը գեղեցկօրէն ներկայացնելով՝ շնորհակալութիւն յայտնեց քաղաքի պատասխանատուներին իրենց կատարած Ամա-

նորեայ այցելութեան առթիւ եւ խօսքը փոխանցեց ուրբաթօրեայ աղօթապետին: Աղօթապետը շնորհաւորելով Ամանորը եւ Ս. Ծնունդը՝ իր գոհունակութիւնն յայտնեց Աստծուն՝ իսլամ եւ քրիստոնեայ ժողովուրդների միջեւ փոխադարձ սէր ու յարգանք եւ միաբանութիւն հաստատելու համար: Նա շեշտեց, որ նոյնիսկ իրաւական ատեաններում եւ դատարաններում, ոչ մի խտրականութիւն չկայ՝ երկու միաստուածեան կրօնների հետեւորդների միջեւ եւ համահաւասար պաշտպանւում է իւրաքանչիւր իրանահպատակի դատն ու իրաւունքը:

Յաջորդիւ ելոյթ ունեցաւ գերպ. Հայր Սուրբը, ով եւս իր հերթին իր ուրախութիւնը յայտնեց պետական բարձրաստիճան պաշտօնէութեան եւ պատասխանատուների այցելութեան առթիւ՝ այն որակելով որպէս պետութեան եւ փոքրամասնութիւնների միջեւ փոխյարգանքի ու համագործակցութեան դրսեւորումներից մէկը: Գերպ. Հայր Սուրբն իր խօսքում արտայայտեց. «***Աշխարհի ոչ մի անկիւնում այսպիսի սէր ու փոխյարգանք չկայ համատեղ ապրող ժողովուրդների միջեւ եւ Իրանի Իսլամական Հանրապետութիւնը որպէս սիրոյ խորհրդանիշ՝ մարդկանց ապահովութիւն է ներշնչում: Ջնայած տարածաշրջանում Ամերիկայի եւ Իսրայէլի սադրանքներին ու եղբայրասպան պատերազմներ հրահրելու եւ սերմանելու նենգ ջանքերին՝ Իրանը միշտ տարածաշրջանում հաստատել է խաղաղութիւն եւ եղբայրութիւն եւ ամէն ջանք ի սպաս է դրել նմանատիպ նենգութիւնները չէզոքացնելու ուղղութեամբ: Ուստի որտեղ սիրով, յարգանքով եւ վստահութեամբ են միացել ժողովուրդները՝ չարն անզօր է այդ անդորրը խափանելու գործում եւ չարաչար պարտուած է***»: Հայր Սուրբն օրհնելով բոլոր պատասխանատուներին՝ մաղթեց նրանց ոյժ, կորով, եռանդ եւ առողջութիւն:

Այնուհետեւ հերթաբար արտայայտուեցին քաղաքապետ պրն. Ամիոին, Քաղ-խորհրդի տնօրէն պրն. Բիդռամը եւ գաւառապետի տեղակալը, որոնցից իւրաքանչիւրն ըստ արժանւոյն բարձր գնահատեց հայ համայնքին որպէս օրինապահ, ազնիւ ու յանձնառու քաղաքացիներ՝ երկրի բարգաւաճմանը համագործակցելու եւ երկրում կազմակերպւող ընտրութիւններին ակտիւօրէն մասնակցելու համար:

Օրւայ առիթով կազմակերպւել էր հիւրասիրութիւն, որը վայելեցին ներկաները զարդարւած դահլիճում՝ ջերմ ու հիւրընկալ մթնոլորտում: Աւարտին Հայ համայնքի վարչութիւնը յուշանուէրներ յանձնեց բոլոր հիւրերին: Իսկ քաղաքապետարանի կողմից Վարչութեանը նուիրւեց մի գեղեցիկ տօնածառ:

ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ՝ ՇԱՀԻՆՇԱՀՐԻ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ «ՆԱՐԵԿ» ՄԱՆԿԱՊԱՐՏԷԶ-ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆ

Շաբաթ՝ 2017 թւականի յունւարի 21 առաւօտեան ժամը 10:30-ին, Շահինշահրի Հայ կանանց եկեղեցասիրաց միութեան անդամուհիները՝ համայնքի հոգեւոր հովիւ արժ. Տ. Սահակ քհնյ. Մինասեանի ուղեկցութեամբ, Ս. Ծննդեան տօների առիթով այցելեցին համայնքի «Նարեկ» մանկապարտէզ-նախակրթարան:

Դպրոցի տեսչուհի օրդ. Կարինէ Մինասքանեանի բարիգալստեան խօսքին յաջորդեց սաների երգի ու ասմունքի գեղեցիկ ելոյթը: Այնուհետեւ արժ. քահանայ հայրն առիթը պատեհ համարելով կատարեց օրհնանքի կարգը՝ օրհնելով հացը, աղն ու ջուրը՝ բացատրելով այդ խորհրդի իմաստը:

Յաջորդիւ միութեան նախագահ տկն. Լինա Մովսիսեանը շնորհաւորելով բոլորին Ամանորեայ եւ Ս. Ծննդեան տօների կապակցութեամբ՝ բարձր գնահատեց դպրոցի անձնակազմի եւ ծնողական խորհրդի ծաւալած աշխատանքը՝ հայ մանկանը հայեցի կրթելու եւ դաստիարակելու նուիրական գործում:

Միութիւնը Ամանորի առիթով պատրաստել էր գեղեցիկ նուէրներ դպրոցի սաների համար, որոնք նուիրեցին նրանց՝ քահանայ հօր ձեռամբ:

Դպրոցի անձնակազմը սիրով պատասխանեց միութեան անդամուհիների կողմից կրթա-դաստիարակչական աշխատանքների մասին հնչած հարցումներին եւ յստակ պատկեր ներկայացրեց իրագործած գործունէութեան կապակցութեամբ:

Վերջում տեղի ունեցաւ համեստ հիւրասիրութիւն:

ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ ՇԱՀԻՆՇԱՀՐԻ ՀՐՇԷՋ ԾԱՌԱՅՈՒԹԵԱՆ ԿԱՅԱՆԱՏԵՂԻ

Ն.Զ. Հայ Մ.Մ. «Արարատ» միութեան Շահինշահրի մասնաճիւղի վարչութեան նախաձեռնութեամբ, 2017 թւականի յունուարի 22-ի ժամը 17:00-ին, կազմակերպւել էր այցելութիւն Շահինշահրի հրշէջ ծառայութեան կայանատեղի՝ յարգանքի տուրք մատուցելու 2017 թւականի յունուարի 19-ի առաւօտեան Թեհրանի «Պլասկօ» շէնքի փլուզման հետեւանքով զոհուած հրշէջների յիշատակին, ովքեր կատարելով իրենց աշխատանքը՝ ցանկանալով կրակի ճիրաններից փրկել վտանգի մէջ ընկած մարդկանց, չխնայելով իրենց կեանքը, հերոսաբար զոհուեցին՝ յայտնուելով փլատակների տակ:

Միութեանս անդամների միջոցով կատարուեց մոմերով երթ եւ ծաղկեմատոյց, իսկ մասնաճիւղի վարչութեան անդամների միջոցով հրշէջ ծառայութեան կայանատեղիի շրջափակում տեղադրուեց ծաղկեպսակ:

Յարգանքի տուրքին իրենց մասնակցութիւնը բերեցին միութենականները եւ հայ համայնքի անդամները: Ապա մասնաճիւղի վարչութեան անդամները սրտի անհուն վշտով համակած ցաւակցութիւն յայտնեցին Շահինշահրի հրշէջ ծառայութեան ղեկավարութեանը եւ աշխատակիցներին, ցանկանալով զոհուած հրշէջների հոգիներին խաղաղութիւն եւ երկնքի արքայութիւն:

ՏԵԱՌՆԸՆԴԱՌԱՋԸ ԵՒ ԱՒԱՆԴԿԱՆ ՀՐԱՎԱՌՈՒԹԻՒՆԸ ՇԱՀԻՆՇԱՀՐՈՒՄ

Երկուշաբթի՝ 2017 թւականի փետրուարի 13-ի առաւօտեան ժամը 11:00-ին, «Սրբոց Վարդանանց» եւ «Մասիս» դպրոցների աշակերտները դպրոցական անձնակազմի եւ Ծնողական խորհրդի ուղեկցութեամբ առաջնորդուեցին համայնքի «Նարեկ» մանկապարտէզ-նախակրթարան՝ այնտեղ միասին նշելու աւանդական Հրավառութիւնը եւ Տեառնընդառաջը:

Բարիգալստեան խօսքով հանդէս եկաւ «Նարեկ» մանկապարտէզ-նախակրթարանի տեսչուհի օրդ. Կարինէ Մինասքանեանը, ով իր ուրախութիւնը յայտնեց ընձեռուած գեղեցիկ առիթի համար:

Յաջորդիւ Տեառնընդառաջի խորհուրդը հանգամանօրէն բացատրեց արժն. Տ. Սահակ քհնյ. Մինասեանը, որից յետոյ աշակերտները հաւաքուեցին նախապէս պատրաստուած թուփի շուրջ, որը բոցավառուեց բրշն. Սեւադա սրկ. Իսաղուլեանի ձեռամբ:

Աշակերտները պատասխանատուների հետ միասին շրջան կազմելով խարոյկի շուրջ՝ երգեցին եւ զւարճալի պահեր վայելեցին:

Այնուհետեւ ճաշակով զարդարուած դպրոցի սրահում՝ բոլոր ներկաները հիւրընկալուեցին զոյգ դպրոցների ծնողական խորհուրդների պատրաստած հրուշակեղէնով, քաղցրաւենիքով եւ աղանձով:

Նոյն օրը երեկոյեան, «Սրբոց Վարդանանց» եկեղեցու շրջափակում կատարուեց Տեառնընդառաջի նախատօնակ եւ աւանդական հրավառութիւն՝ համայնքի հոգեւոր տեսուչ գերպ. Տ. Անանիա Ծ. Վրդ. Գուճանեանի ձեռամբ եւ արժն. Տ. Սահակ քհնյ. Մինասեանի ու դպրաց դասի մասնակցութեամբ:

Օրւայ արարողութեանը ներկայ էին Հայ Համայնքի Վարչութիւնը, միութիւնները, ուսուցչական անձնակազմերը, ծնողական խորհուրդները եւ համայնքի անդամներ:

Եկեղեցական արարողութեան ընթացքում կատարուեց նորածինների տաճար ընծայման կարգը:

Եկեղեցական արարողութեան աւարտին, գերպ.

Հայր Սուրբը բացատրեց Տեառնընդառաջի խորհուրդը եւ նրա հետ կապած ժողովրդական ծիսական մի քանի սովորոյթներ: Նա գեղեցկօրէն բնութագրեց Քրիստոսին որպէս աշխարհի լոյսը եւ մեր հոգու միակ Փրկիչը, ում զօրութեամբ կարելի է բացւեն մեր հոգու աչքերը, լուսաւորւեն մեր մտքերն ու մաքրւեն մեր սրտերը: Եւ միայն այդ ժամանակ կարելի է տեսնել պայծառ աչքերով ու ընկալել ճշմարտութիւնը՝ վառ ու առողջ մտքով եւ որդեգրել քրիստոնավայել կենցաղ: Նա իր քարոզի աւարտին շնորհաւորելով Տեառնընդառաջը՝ օրհնեց նորածիններին ու բարեմաղթեց նորապսակներին անմար սէր, փոխադարձ յարգանք, ամուր ընտանիք եւ բարօրութիւն:

Այդ օրւայ արարողութիւնը նշանաւորւեց նաեւ Հայ համայնքի վարչութեանը ուղղւած գերպ. Հայր Սուրբի դրւատանքի խօսքը՝ «Սրբոց Վարդանանց» եկեղեցու նորոգման եւ բարեզարդման կապակցութեամբ: Իսկ գնահատագիր յանձնւեց նոյն վարչութեան ատենապետ պրն. Մելքոն Շիրւանեանին՝ նշեալ նախագիծը ամենայն յանձնառութեամբ եւ նւիրւածութեամբ գլխաւորելու առիթով:

Նախատօնակի արարողութիւնից յետոյ, գերպ. Հայր Սուրբի աղօթքով եւ նորապսակ զոյգերի միջոցով բոցավառւեց շփջափակում տեղադրւած հսկայ թուփը, որին յաջորդեց տօնական տրամադրութիւնը կրակի շուրջ:

Այնուհետեւ նորապսակ զոյգերը եւ նորածիններն իրենց ծնողների հետ մեկնեցին Նոր Ջուղա՝ մասնակցելու Սպահանի հայոց թեմի Կրօնական խորհրդի նախաձեռնութեամբ կազմակերպւած ծրագրին:

ՇԱՀԻՆՇԱՀՐՈՒՄ ՆՇՈՒԵՑ ՍՐԲՈՑ ՎԱՐԴԱՆԱՆՑ ՏՕՆԸ

Շահինշահրի եկեղեցու եւ դպրոցի անւանակցութիւնը պատեհ համարելով, «Սրբոց Վարդանանց» տօնին, Շահինշահրում տեղի ունեցաւ Մատաղօրհնէքի արարողութիւն՝ համայնքի հոգեւոր տեսուչ գերպ. Տ. Անանիա Ծ. վրդ. Գուճանեանի ձեռամբ եւ Համայնքի վարչութեան կազմակերպութեամբ:

Խորհուրդ ունեցողներից հանգանակած գումարով գնւեց մատաղացու ոչխարը եւ չորեքշաբթի՝ 2017 թ. փետ. 22-ին, Շահինշահրի «Սրբոց Վարդանանց» դպրոցի շրջափակում կատարւեց Աղօրհնէքի արարողութիւն՝ գերպ. Տ. Անանիա Ծ. վրդ. Գուճանեանի ձեռամբ, ապա տեղի ունեցաւ ոչխարի զենում:

Հինգշաբթի՝ փետրւարի 23-ի առաւօտեան, «Սրբոց Վարդանանց» եկեղեցու սրահում սուրբ եւ անմահ Պատարագ մատուցւեց գերպ. Տ. Անանիա Ծ. վրդ. Գուճանեանի ձեռամբ եւ արժանապատիւ քահանայ հայրեր Տ. Վազգէն Քէօշկէրեանի եւ Տ. Սահակ Մինասեանի մասնակցութեամբ: Արարողութեանը ներկայ էին Սպահանի հայոց թեմի Կրօնական խորհրդի, Նոր Ջուղայի եկեղեցեաց վարչութեան, Շահինշահրի հայ համայնքի վարչութեան ներկայացուցիչները, «Նարեկ» մանկապարտէզ-նախակրթարանի, «Սրբոց Վարդանանց» եւ «Մասիս» դպրոցների ուսուցչական կազմերը, Ծնողական խորհուրդները, աշակերտութիւնը եւ բազում հաւատացեալներ:

Օրւայ խորհրդին սպասարկեց սարկաւագաց դասը, իսկ Ս. Պատարագի երգեցողութեան ընթացքում համայնքի «Նարեկ» երգչախմբին ձայնակցեցին Նոր Ջուղայի եկեղեցական երգչախմբից մի քանի անդամուհիներ:

Պատարագի ընթացքում Տ. Վազգէն քհնյ. Քէօշկէրեանն ընթերցեց Պօղոս առաքեալի թղթերից:

«Սրբոց Վարդանանց» զօրավարների եւ 1036 նա-

հատակ վկաների յիշատակին մատուցող այս Պատարագի ընթացքում, յաւուր պատշաճի քարոզեց գերպ. Հայր Սուրբը՝ ընդգծելով Սրբոց Վարդանանց կարգախօսը՝ «*Մահ ոչ իմացեալ մահ է, մահ իմացեալ՝ անմահութիւն*»:

Սուրբ Պատարագից յետոյ տեղի ունեցաւ Մատաղի օրհնութիւն, եւ մատաղը բաժանուեց բարեպաշտ ժողովրդին: Այնուհետեւ հաւատացեալները հրաւիրուեցին վայելելու օրուայ առիթով կազմակերպուած ճաշկերոյթը:

Հայ համայնքի վարչութեան անունից, օրուայ հաղորդավար՝ Վիոլետ Յարութիւնեանը ողջունելով բոլոր ներկաներին՝ հրաւիրեց Վարչութեան ատենապետ Մելքոն Շիրաանեանին արտայայտուելու: Պրն. Շիրաանեանն իր երախտագիտական խօսքն ուղղեց ազգային եւ կրօնական իշխանութեան՝ իրենց ցուցաբերած նիւթաբարոյական հովանաւորութեան առթիւ, նաեւ շնորհակալութիւն յայտնեց վարչութեան միւս անդամներին վարչական կեանքում իրենց լաւագոյնը դրսեւորելու համար:

Ս. Ղեւոնդեանց տօնի առիթով Համայնքի վարչութեան կողմից նուէրներ յանձնուեցին գերպ. Տ. Անանիա Ծ. վրդ. Գուճանեանին, արժն. Տ. Սահակ քհնյ. Միանասեանին եւ բրշն. Սեւադա կիս.սրկ. Իսաղուլեանին:

Համայնքի վարչութեան անունից՝ շնորհակալագրեր յանձնուեցին հարիսայի պատրաստման աշխատանքը ամենայն հոգատարութեամբ իրագործած յանձնախմբին, որի անդամներն էին Վարդգէս Ղուկասեանը. Մասիս Քեշիշեանը, Եղիշ Աղախանեանը, Ղազար Յովսէփեանը եւ Յովիկ Ղազարեանը:

Յաջորդիւ հրաւիրուեց Սպահանի հայոց թեմի Կրօնական խորհրդի ատենապետ Վարուժ Մովսիսեանը, ով խորհրդի անունից պատուոգրեր յանձնեց Համայնքի վարչութեան անդամներին իրենց կրօնական եւ ազգային ծառայութեան՝ ի մասնաւորի համայնքի «Սրբոց Վարդանանց» եկեղեցու բարեզարդման գործին ներդրման համար: Իսկ պատուոգրից բացի նաեւ պարգեւատրուեց Համայնքի վարչութեան ատենապետ պրն. Մելքոն Շիրաանեանը՝ նշեալ եկեղեցու նորոգման նախագծի գործադրումն ամենայն յանձնառութեամբ եւ նուիրուածութեամբ գլխաւորելու առիթով:

Իսկ երբ պրն. Մովսիսեանը հանգամանօրէն յայտնեց նշեալ եկեղեցու բարեզարդման համար Նոր Ջուղայի եկեղեցեաց վարչութեան ցուցաբերած նիւթական ներդրման հանգամանքը՝ բոլոր ներկաները ծափողջոյններով իրենց բարձր գնահատանքը յայտնեցին բարերար վարչութեանը:

Օրուայ առիթով իր հայրական պատգամը հաղորդելիս գերպ. Հայր Սուրբը բարձր գնահատեց ազգային եւ կրօնական մարմինների, ենթամարմինների եւ միութիւնների կատարած աշխատանքները՝ դրուատելով նրանց միահամուռ եւ միասնական գործունէութիւնը:

Օրուայ ճաշկերոյթն՝ ինչպէս հայկական սեղանին է բնորոշ՝ համեմուեց Ռազմիկ Մարկոսեանի սեղանապետութեամբ, որի ընթացքում իրենց քաղցր ու հնչեղ ձայնով ծաղկացրեցին Ռիտա Մկրտչեանը եւ Սաքօ Տէր-Յովհաննիսեանը:

ՍՊԱՀԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ 16-ՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՊԱՏԳԱՄԱՒՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ԵՒ ՇԱՀԻՆՇԱՀՐԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ 10-ՐԴ ՇՐՋԱՆԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՂ ՇԱՀԻՆՇԱՀՐԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ԺՈՂՈՎՐԴԻ ՀԵՏ

Սպահանի հայոց թեմի 16-րդ նստաշրջանի Պատգամաւորական Ժողովի եւ Շահինշահրի Հայ Համայնքի Վարչութեան 10-րդ շրջանի Ընտրական յանձնախմբի կազմակերպութեամբ եւ համայնքի Հոգեւոր Տեսուչ Տ. Անանիա Ծ. Վրդ. Գուճանեանի ներկայութեամբ, հինգշաբթի՝ 2017 թ. փետրուարի 16-ի երեկոյեան ժամը 7:30-ին, Շահինշահրի «Սրբոց Վարդանանց» դպրոցի սարհում, համայնքի 10 թեկնածուները հանդիպեցին ժողովրդի հետ: Թեմիս Պատգամաւորական Ժողովի ընտրութեանը իրենց թեկնածութիւնն էին առաջադրել 3, իսկ Համայնքի Վարչութեանը՝ 7 թեկնածուներ՝ հետեւեալ ընտրացանկով ըստ այբբենական կարգի.

Պատգամաւորական Ժողովի թեկնածուներ՝

1. Թորոսեան Մելինէ
2. Յարութիւնեան Վիոլետ
3. Քեշիշեան Մառիթա

Հայ Համայնքի Վարչութեան թեկնածուներ՝

1. Բաբումեան Էդուին
2. Թահմազեան Ջանիկ
3. Թահմազեան Ստեփանոս
4. Թորոսեան Ռայմոնդ
5. Հախնազարեան Արմոնդ
6. Միրզախանեան Գառնիկ
7. Շիրւանեան Մելքոն

Ծրագրի համաձայն, սկզբում թեկնածուներն առանձնաբար ներկայացրին իրենց կենսագրականն ու ծրագրերը, ապա երկրորդ բաժնում պատասխանեցին ներկաներին յուզող հարցերին:

Հանդիպումը վարեցին Ընտրական յանձնախմբի ներկայացուցիչներ՝ պրն. Եղիշ Աղախանեանը եւ տկնյք. Վարդուհի Պողոսեանն ու Էմմա Օրդուբէգեանը: Հանդիպման աւարտին իր եզրափակիչ խօսքով հանդէս եկաւ Գերպ. Հայր Սուրբը, ով իր կոչն ուղղելով ներկաներին՝ հրաւիրեց բոլորին միասնական եւ միահամուռ մասնակցեն ընտրութիւններին՝ ի շահ Թեմի եւ հետեւաբար համայնքի բարգաւաճմանն ու բարօրութեանը:

Շահինշահրի Հայ Համայնքի Վարչութեան նախաձեռնութեամբ՝ «Սրբոց Վարդանանց» դպրոցի շրջափակում ստեղծուել են հնարաւորութիւններ, որպէսզի բոլոր թեկնածուները հաւասարապէս կարողանան օգտագործեն դրանք՝ իրենց քարոզարշաւը կազմակերպելու համար:

Երկու ընտրութիւններն էլ կայանալու են ուրբաթ՝ փետրուարի 24-ին՝ «Սրբոց Վարդանանց» դպրոցի շրջափակում:

ՍՊԱՀԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ՊԱՏԳԱՄԱՒՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ԵՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ՝ ՇԱՀԻՆՇԱՀՐՈՒՄ

Ուրբաթ՝ 2017 թ. փետրուարի 24-ին, առաւօտեան ժամը 8:00-ից, Շահինշահրի «Սրբոց Վարդանանց» դպրոցի շրջափակում կայացան Սպահանի հայոց թեմի 16-րդ նստաշրջանի Պատգամաւորական ժողովի եւ Շահինշահրի հայ համայնքի Վարչութեան 10-րդ շրջանի ընտրութիւնները:

Համայնքի անդամները մասնակցելով ընտրութիւններին ընտրեցին այս նստաշրջանի 3 պատգամաւոր եւ 5 վարչութեան անդամին:

Սոյն ընտրութեանը համայնքի հոգեւոր տեսուչ Տ. Անանիա Ծ. վրդ. Գուճանեանը, արժն. Տ. Սահակ քհնյ. Մինասեանը եւ թեկնածուները ներկայացան ընտրատեղամաս եւ քւէարկեցին:

Շահինշահրի զոյգ ընտրութիւնների Ընտրական յանձնախմբի յայտարարութեան համաձայն Պատգամաւորական ժողովի 16-րդ նստաշրջանի համար ընտրուել են Մարիտա Քեշիշեանը, Մելինէ Թորոսեանը եւ Վիոլետ Յարութիւնեանը, իսկ Հայ համայնքի վարչութեան 10-րդ շրջանի ընտրութիւնների արդիւնքում ընտրուել են Մելքոն Շիրւանեանը, Ռայմոնդ Թորոսեանը, Էդուին Բաբումեանը, Արմոնդ Հախնազարեանն ու Ստեփանոս Թահմազեանը:

ՏԱՐԱԶԱՀԱՆԴԷՍ ՇԱՀԻՆՇԱՀՐՈՒՄ ԲՈՒՆ ԲԱՐԵԿԵՆԴԱՆԻ ԱՌԹԻՒ

Կիրակի՝ 2017 թւականի փետրուարի 26-ի երեկոյեան, Շահինշահրի «Հայ կանանց եկեղեցասիրաց» միութեան նախաձեռնութեամբ Բուն Բարեկենդանի առիթով կազմակերպւել էր գեղեցիկ տարազահանդէս եւ ուրախ տօնախմբութիւն՝ համայնքի «Սրբոց Վարդանանց» դպրոցի սրահում:

Տօնախմբութեանը ներկայ էր մեծ թւով ժողովուրդ:

Գունեղ պատկերներով զարդարւած սրահը խօսուն վկան էր կազմակերպիչ միութեան բարձր ճաշակի:

Կազմակերպիչ միութեան ատենապետ՝ Լինա Մովսիսեանը, բարի գալուստ մաղթելով բոլորին, հանգամանօրէն ներկայացրեց Բուն Բարեկենդանի խորհուրդը եւ այս գեղեցիկ աւանդոյթի հետ կապւած ժողովրդական սովորոյթները, որոնք ակունք են առել հին ժամանակներից եւ վառ ապացոյցն են մեր ժողովրդի բարեպաշտութեան:

Այնուհետեւ տկն. Մովսիսեանը ընթերցեց արժն. Տ. Սահակ քհնյ. Մինասեանի մաղթանքը Բուն Բարեկենդանի առթիւ, որը մէջբերում ենք ստորեւ.

«Տէր Հօր մաղթանքը եւ օրհնութիւնը Ձեզ սիրելի հաւատացեալ ժողովուրդ, յառաջիկայ Մեծ Պահքի շրջանին բոլորին մաղթելով ուխտի նորոգման, հոգու մաքրութեան եւ փափագների իրականացման շրջան։ Ինչ որ խնդրենք Տիրոջից՝ թող իրականանայ։ Ձեզ բոլորիդ յաջողութիւն, քաջառողջութիւն եւ անսահման երջանկութիւն»։

Ծրագիրը հաճելի էր՝ համեմւած նաեւ հայկական գեղեցիկ ու հոգեհարազատ երգ-երաժշտութեամբ:

Տարազ հագած մանուկ-պատանիներն իրենց ուրախ տրամադրութեամբ դրական լիցքեր փոխանցեցին դահլիճում գտնուողներին եւ գնահատանքի արժանացան ներկաների կողմից:

Կազմակերպիչ միութիւնը խրախուսելով մանուկ-պատանիների խանդավառութիւնն ու տպաւորիչ մասնակցութիւնը՝ նրանց նւիրեց փաթեթաւորւած աղանձ:

ԲՈՒՆ ԲԱՐԵԿԵՆԴԱՆԸ ՇԱՀԻՆՇԱՀՐԻ «ՆԱՐԵԿ» ՄԱՆԿԱՊԱՐՏԷԶ-ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆՈՒՄ

Երկուշաբթի՝ 2017 թ. փետրուարի 27–ի առաւօտեան ժամը 9:00-ից՝ Շահինշահրի «Նարեկ» մանկապարտէզ-նախակրթարանի տեսչութեան, ուսուցչական կազմի եւ ծնողական խորհրդի նախաձեռնութեամբ նշւեց Բուն Բարեկենդանը՝ ծնողների ներկայութեամբ:

Օրւայ առիթով սաները ներկայացել էին գունեղ ու հետաքրքիր զգեստներով՝ ըստ ճաշակի եւ ցանկութեան: Նրանք ուրախ երգեցին, արտասանեցին ու պարեցին՝ աշխոյժ ծաղրածուների ընկերակցութեամբ:

Տօնն աւելի հաճելի դարձաւ, երբ ծնողները եւս միանալով փոքրիկների խրախճանքին՝ մասնակցեցին ուրախ երգ ու պարին:

Իսկ վերջում ծաղրածուները, ծնողական խորհրդի ձեռամբ պատրաստւած փաթեթաւորւած մրգերը նւիրեցին սաներին:

ՍՊԱՀԱՆ ՆԱՀԱՆԳԻ ՄԱՐՄՆԱՄԱՐՈՒԹԵԱՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԻՆ ԵՆԹԱԿԱՅ ՀԱՅ ՉԵՄՊԻՈՆՆԵՐԸ ԳՆԱՀԱՏԻԵՑԻՆ ՍՈՅՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ

Սպահան նահանգի մարմնամարզութեան (բոդիբիլդինգ) յանձնաժողովի նախագահ Հոսէյն Եառմոհամադեանը եւ նրան ընկերակցող պատուիրակութիւնը, Ամանորի եւ Ս. Ծննդեան տօների առթիւ, աննախադէպ այցելութիւն կատարելով հայի տնօրինութեամբ աշխատող «Մասիս» մարմնամարզութեան ակումբ, գնահատեցին սոյն յանձնաժողովին ենթակայ, Իրանի եւ միջազգային մակարդակներով իրականացուած առաջնութիւնների եօթ հայ չեմպիոններին ու նրանց մարզիչներին: Պատուիրակութեանը մաս էին կազմել յանձնաժողովի մի շարք պատասխանատուներ ու մարմնամարզութեան ոլորտի տարիների չեմպիոններ:

Հանդիպման ընթացքում հնչեցին շնորհաւորանքի խօսքեր ու բարեմաղթանքներ, ապա յանձնաժողովի նախագահի կողմից գնահատագրերի արժանացան մարմնամարզիկներ՝ Նոէլ Նորուիկ Օհանեանը, Մայիս Թորոսեանը, Մանուկ Թորոսեանը եւ Էդուիկ Մարկոսեանը, բազկամարտիկ Օշին Տէր-Գրիգորեանը, կրծքի փրեսով զբաղւող Սերօ Շահիջանեանն ու ծանրամարտիկ Սերգէյ Փանոսեանը: Գնահատեցին նաեւ մարզիչներ՝ Շահռամ Ֆոռուղին եւ Մաջիդ Դուսթին:

Նշելի է նաեւ, որ ի երախտագիտութիւն տրուած աննախադէպ այցելութեան, «Մասիս» մարմնամարզութեան ակումբի անունից սոյն կենտրոնի տնօրէն Նոէլ Նորուիկ Օհանեանը շնորհակալագրեր յանձնեց պրն. Եառմոհամադեանին եւ նրան ընկերակցող պատուիրակութեան անդամներին:

ԱՆԱՀԻՏ ՓԻԼՈՍԵԱՆԸ ԳՆԱՀԱՏԻԵԼ Է ՈՐՊԷՍ 1395 ԹՒԱԿԱՆԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ԲՈՒԺՔՈՅՐ

Սպահանի «Ալ-Զահրա» ուսուցման եւ բժշկական կենտրոնի (ICU) բաժանմունքում աշխատող հայ բուժքոյր Անահիտ Փիլոսեանը, Սպահանի Հիւանդապահութեան համակարգի կազմակերպութեան (سازمان نظام پرستاری) կողմից ճանաչուել է որպէս իրական 1395 թւականի օրինակելի բուժքոյր՝ մասնագիտական բարձր հմտութիւններին, հիւանդների նկատմամբ ցուցաբերած հոգատարութեան եւ աշխատանքում դրսեւորած պարտաճանաչութեան ու բծախնդրութեան համար. նա նոյն այս յատկութիւններով է ճանաչուած իր աշխատանքի վայրում եւ գործընկերների մօտ:

Անահիտ Փիլոսեանը ծնուել է 1976 թւականին, Ահուազում, ուր եւ ապրել է մինչեւ իր ամուսնանալը՝ 2000 թւականը: Նա իր դպրոցական կրթութիւնն ստացել է Ահուազի հայոց ազգային «Քառուն» տարրական եւ «Ռաֆֆի» ուղեցոյց եւ պարսկական «Էֆաթ» միջնակարգ դպրոցներում:

Այնուհետեւ մասնակցելով համալսարանների մուտքի քննութեանը՝ ընդունուել է Ահուազի Ազատ համալսարանի հիւանդապահութեան ճիւղում եւ աւարտել 2000 թւականին՝ լիսանսի աստիճանով: Նա աշխատանքի է անցել «Ալ-Զահրա» հիւանդանոցում՝ 2001 թւականից եւ մինչեւ օրս անդամակցում է Սպահանի Հիւանդապահութեան համակարգի կազմակերպութեանը:


لوح سپاس

سرکار خانم آنجلیه سلیمان

پرستار محترم شاغل در مرکز آموزشی درمانی الزهرا (س)

با سلام و احترام

"مومن امینا فاضلا امینا"

"من لم یشکر المخلوق لم یشکر الخالق"

عباس اسکندری
رئیس هیات مدیره نظام پرستاری اصفهان

دکتر حمید رضا شتابی
معاون درمان

ՆԻՒԹԱՏՈՒԹԻՒՆՆԵՐ

Ն.Զ. Հայոց Առաքելական Եկեղեցեայ Վարչութիւն

Հանգուցեալ Աստանազ Յովհաննիսեանի յիշատակին

- 1,000,000 ռիալ. Հերոս եւ Անահիտ Թորոսեաններ

Հանգուցեալ Յարութ Փանոսեանի յիշատակին

- 1,500,000 ռիալ. Ռոբերտ Քեշիշեան
- 500,000 ռիալ. Անդրէ Նազարեան
- 250,000 ռիալ. Ստեփան Մինասեան
- 200,000-ական ռիալ. Սիմիկ Ղարախանեան, Ծաղկանուշ Յովսէփեան, Մարջիկ Մինասեան, Հրաչ Թորոսեան, Աննիկ Քեշիշեան, Վարդան Գէորգեան
- 150,000-ական ռիալ. Մոհամմադ Ֆաոի Փուռ, Ռեզա Բիռիա
- 100,000-ական ռիալ. Վարդանուշ Յովսէփեան, Ժենիկ Մուրադեան, Իշխան Թահմազեան, Երուանդ Խաչիկեան

Հանգուցեալ Էդօ Ղոյումչեանի յիշատակին

- 1,500,000 ռիալ. Մոթահառի
- 250,000 ռիալ. Վաչէ եւ Նոռա Շահիջանեաններ
- 200,000 ռիալ. Յարութ Բաղդասարեան
- 150,000 ռիալ. Գէորգ Յովսէփեան
- 100,000-ական ռիալ. Թէոդիկ եւ Արփինէ Պօղոսեաններ, Զանսոն եւ Արսինէ Աղաբաբայեաններ

Հանգուցեալ Ռոբերտ Ղեւոնդեանի յիշատակին

- 700,000 ռիալ. «Կատարինեան» դպրոցի ուսուցչական կազմ եւ Ծնողական խորհուրդ
- 500,000 ռիալ. Դաւթեան ընտանիք
- 450,000 ռիալ. «Կատարինեան» դպրոցի 7- րդ դասարանի աշակերտներ
- 300,000 ռիալ. Սաթի եւ Սոնա Զարգարեաններ
- 200,000 ռիալ. Ռոլանդ եւ Ժանետ Ղարախանեաններ
- 150,000 ռիալ. Էդիկ եւ Վարդուշ Ազարանդներ
- 100,000 ռիալ. Երանուհի Շահբազեան

Ծանր հիւանդների ֆոնդ

- 300,000 ռիալ. «Կոմիտաս» երգչախումբ՝ Մարօ Ղազարեանի յիշատակին:

Սպահանի հայոց թեմի Բարեսիրական մարմին

- 500,000 ռիալ. Սիմոն եւ Հրաչիկ Ղարախանեաններ

Ն.Զ. Հայոց ազգային գերեզմանատան բրեզարդման մարմին

- 10,000,000 ռիալ. Տիգրանուհի Ղարիբեան՝ Յարութիւն Յակոբեանի յիշատակին
- 300,000 ռիալ. Սեդա Այլազեան՝ իր մօր յիշատակին

Ս. Ամենափրկչեան վանքի «Կոմիտաս» երգչախումբ

Տարեկան համերգի առթիւ

- 2,000,000 ռիալ. Ն.Զ. Հայ Մ.Մ. «Արարատ» միութիւն
- 1,000,000-ական ռիալ. Սպահանի հայոց թեմի Կրօնական խորհուրդ, Հ.Յ.Դ.-ի Գետաշէնի կոմիտէութիւն, Հայ Դատի Ն.Զ. յանձնախումբ, Սերժիկ Բաղրամեան, Վարուժ Մինասեան
- 700,000 ռիալ. Կարինէ Արմէն-Խաչիկեան
- 600,000 ռիալ. Վոլգա Մեսրոպեան
- 500,000-ական ռիալ. Ն.Զ. Հայուհեաց բարեգործական ընկերութիւն, Ն.Զ. Հայ կանանց գթութեան միութիւն, Փերիոյ կրթասիրաց միութիւն, Ալենուշ Մատոյեան, Օֆիկ Գէորգեան, Արսինէ Անդրիասեան, Սթելա Ղահիբեան, Կարին Տէր-Մարտիրոսեան, Հարմա Կարապետեան, Այլին Գէորգեան, Անահիտ Թէյմուրեան, Մարօ Ղարախանեան, Վանա Շիրուանեան, Լինա Թէյմուրեան, Էմիկ Վարդանեան, Ադլին Յովհաննիսեան, Ռիթա եւ Մարինէ Մկրտչեաններ
- 350,000 ռիալ. Անիթա Ալեքսանդրեան
- 300,000-ական ռիալ. Հայ ուս. Զհարմահալ միութեան Ն.Զ. մասնաճիւղ, Շահինշահրի Հայ կանանց եկեղեցասիրաց միութիւն, Ալիս Մուսախանեան, Ռիմա Մուսախանեան, Ռուբինա Ղարիբեան, Մարգարիտ Սիրջանեան, Լիդա Յակոբեան, Նարինէ Յովսէփեան, Ժուլիեթ Կիրակոսեան, Արայիկ Գրիգորեան, Թաթուլ Ալլահվերդեան, Նարէ Ասատրեան, Այլին Քեշիշեան, Ալենուշ Ամիրխանեան, Ժանեթ Խուդաբախշեան
- 250,000 Ռոբերտ Ղարախանեան
- 200,000-ական ռիալ. Թանգիկ Միրզախանեան, Նատալիա Ալեքսանդրեան, Նուարդ Վարդանեան, Վիգէն Ղազարեան, Դաւիթ Թորոսեան, Ալենուշ Թորոսեան, Մեղեդի Մանուկեան, Անահիտ Սիմոնեան, Արմէն Ալեքսանդրեան
- 150,000 ռիալ. Մեղրի Կարապետեան
- 100,000 ռիալ. Փրենի Ղազարեան

Շահինշահրի Հայ Համայնքի Վարչութիւն

Շահինշահրի «Սրբոց Վարդանանց» Եկեղեցի

- 2,000,000 ռիալ. Շահինշահրի Հայ կանանց եկեղեցասիրաց միութիւն, ոմն
- 1,000,000-ական ռիալ. Մեսրոպ Առաքելեան, Լինա Մովսիսեան, Երեմ եւ Մագի Յարութիւնեան, Ռաֆիկ Թորոսեան
- 500,000-ական ռիալ. Ալիս Մկրտչեան, Իւրիկ Մարկոսեան, Ռոբերթ Թորոսեան, Յովհաննէս Թորոսեան
- 300,000-ական ռիալ. Սեւադա Իսաղուլեան

«Սրբոց Վարդանանց» տօնի առթիւ

- Մի գլուխ ոչխար. Հայկ Ղարիբեան
- 1,000,000 ռիալ. Սետրակ Դեհբաշեան՝ Ռաֆիկ Դեհբաշեանի յիշատակին
- 500,000-ական ռիալ. Կանանց հոգեւոր լսարան եւ «Շուշանիկ» երգչախումբ, Ալբերտ Քեշիշեան, Պետրոս Յովսէփեան, ոմն (2 պարագայ)
- 300,000-ական ռիալ. Մատթէոս Շահբազեան, Յովհաննէս Թորոսեան, Սեւադա Իսաղուլեան

- 200,000-ական ռիալ. Այլազեան ընտանիք, Արգին Շահմիրզայեան, Ռազմիկ Խուդավերդեան, Վարդգէս Ղուկասեան, Ալեքս եւ Անգելինա Փանոսեաններ, Իւրիկ Մարկոսեան, Անի Մարկոսեան, Սոնիկ Յակոբեան

- 150,000 ռիալ. Արուսեակ Պօղոսեան

- 100,000-ական ռիալ. Սոնիա Մկրտչեան՝ Մատթէոս Մկրտչեանի յիշատակին, Վարդան Յովսէփեան, Արին Աւետեան, Արմինէ Թահմազեան, Անահիտ Թահմազեան, Զարթիկ Սուքիասեան, Սաքօ Մինասքանեան, Շարբաթ Խուդավերդեան

- 50,000-ական ռիալ. Մարիամ Յակոբեան, Քարմէն Շահիջանեան

Առաջնորդարանին եւ ազգային կառոյցին առընչուող լուրերն ու թղթակցութիւնները պատրաստում է Ազգային Առաջնորդարանի Հանրային կապի գրասենեակը, համայնքային եւ կրօնական արարողութիւններինը՝ «Այլիք»-ի թղթակիցները, «Արարատ» Միութեանը՝ Երանուշ Թահմազեանը, Շահինշահրի հայ համայնքինը եւ տեղի «Արարատ» Միութեան մասնաճիւղինը՝ Վիոլետ Յարութիւնեանը եւ Աիդա Մուրադեանը։

Որոշ լուսանկարներ տրամադրում է Գեւիկ Խաչատրեանը։

ՄԵՐ ՀԱՍՑԷԸ

خلیفه گری ارامنه اصفهان و جنوب ایران

صندوق پستی ۸۱۷۳۵/۱۱۵

Armenian Cathedral - P.O.Box 81735-115
New - Julfa, Isfahan, Iran

WWW.Norjugha.ir

WWW.Vank.ir

E-mail: Sourbv@Yahoo.com

Tel: +98–31–36243471-2
Fax: +98–31–36270999